14 ՓԵՏՐՈՒԱՐ 1997 ՈՒՐԲԱԹ # 28 (1282)

# Azg
Azg
armenian daily

## Գրիգորիս արք. Բունիաթյանը հարձակման է ենթարկվել Մոնտեվիդեոյում

ԵՐԵՎԱՆ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ Շիրակի թեմի առաջնորդ Գրիգորիս արք. Բունիաթյանը, որը ներկայումս գտնվում է Ուրուգվայում եւ փետրվարի 9-ին պատարագ է մատուցել Մոնտեվիդեոյի Ս. Ներսես Շնորհալի եկեղեցում, նույն օրը երեկոյան անհայտ անձանց կողմից հարձակման է ենթարկվել քաղաքի փողոցներից մեկում: Քաշքուլի ժամանակ սրբազան հայրը վիրավորվել է, ընկել ու կոտրել ոտը: Նրան տեղափոխել են հիվանդանոց, որտեղ կմնա մոտ երեք շաբաթ:

«Ազգի» կողմից. - Լուրն ստանալուն պես զանգահարեցինք ՌԱԿ Բոստոնի գրասենյակ, որտեղից հաստատեցին այն եւ ավելացրեցին, որ Գրիգորիս սրբազանի վրա հարձակվողը եղել է միայնակ մի տեղացի, որ հարձակումը գործել է կողոպտելու նպատակով: Պատարագից հետո սրբազանը որոշել է մենակ մտնել գալ Մոնտեվիդեոյի Սիուդադ Վիեյա (Հին քաղաք) կոչվող թաղամասում, որտեղ եւ պատահել է դեպքը: Փետրվարի 12-ին տեղի «Բրիտանիկա» հիվանդանոցում վիրահատել են սրբազանի ոտը ծնկից ներքեւ: Նա հիվանդանոցում մնալու է 3 շաբաթ: Գրիգորիս սրբազանը Ուրուգվայ էր մեկնել իր բարեկամ էդվարդո Սեֆերյանի հրավերով, հանգստանալու Փունթա դե էսթե ծովեզերյա հանգստավայրում:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

## Իրանից Հայաստան հոսանքացանցի միացումը հարցականի տակ

*Նախարար Գ. Մարտիրոսյանը չի մեկնել Իրան*

«Հայք» օրաթերթի երեկվա համարում (փետրվարի 13) «Իրանական հոսանքը՝ փետրվարին» վերնագրով լրատվության համաձայն, նույն օրը Իրան էր մեկնելու Հայաստանի էներգետիկայի պատվիրակությունը՝ նախարար Գագիկ Մարտիրոսյանի գլխավորությամբ, Իրան-Հայաստան բարձր լարման հաղորդագծի շահագործման շուրջ բանակցություններ վարելու իրանյան կողմի հետ, որի արդյունքում արդեն փետրվար ամսվա ընթացքում առաջին մեգավատ էլեկտրականությունը ներմուծվելու էր Հայաստան: Այս կապակցությամբ երեկ երեկոյան «Ազգի» խմբագրություն զանգահարեցին Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատնից եւ պաշտոնապես տեղեկացրին, որ «հոսանքացանցի միացումը հարցականի տակ է դրվում», քանի որ «հայկական կողմն իր պարտավորությունները չի կատարել» եւ նախարարի գլխավորությամբ Իրան մեկնելիք պատվիրակությունն առանց նախնական որեւէ բացատրության՝ պարզապես չի մեկնել Թեհրան: Այնինչ, բացատրեցին դեսպանությունից՝ նախատեսված էր, որ հոսանքագծի միացման հարցը վերջնականապես բանակցվեր Հայաստանի էներգետիկայի նախարարի փետրվարի 13-ին Թեհրան կատարելիք այցի ընթացքում, պայմանագիրը ստորագրվեր եւ այնուհետեւ հոսանքագիծը միացվեր Հայաստանին:

Ուշ երեկոյան, ՀՀ էներգետիկայի նախարարությունից որեւէ լուսաբանություն ստանալու մեր ջանքերն անցան աղարդյուն՝ նախարար Գ. Մարտիրոսյանի զբաղվածության պատճառով, իսկ ՀՀ արտգործնախարարության, ինչպես նաեւ վարչապետի համապատասխան ծառայությունները չկարողացան պարզություն մտցնել հարցի մեջ:

ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՈՒՄԲ

## Փետրվարի 24-ին Կոպենհագենում Եռյակի հանդիպում

ԵՐԵՎԱՆ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Փետրվարի 24-ին Կոպենհագենում կհրավիրվի ԵԱՀԿ Մինսկի խմբի Եռյակի (Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա) հանդիպում: Նախատեսվում է, որ հանդիպման օրակարգը հիմնականում կվերաբերի Մինսկի խմբի կազմակերպական խնդիրներին ու աշխատակարգային որոշ հարցերի հստակեցմանը: Այս մասին փետրվարի 13-ին ՀՀ ԱԳ նախարարի առաջին տեղակալ Վարդան Օսկանյանի հետ հանդիպման ժամանակ հայտնել է ԼՂ հակամարտության գծով ԵԱՀԿ նախագահողի անձնական ներկայացուցիչ, դեսպան Անջեյ Կասպրշիկը: Հայկական կողմին խնդրելով կարճիք հայտնել նախատեսված օրակարգի վերաբերյալ, դեսպանն իր հերթին ներկայացրել է այդ կապակցությամբ ԵԱՀԿ նախագահողի մոտեցումները:

Ըստ ՀՀ ԱԳՆ հասարակայնության եւ մամուլի հետ հարաբերությունների վարչության, կողմերն անդրադարձել են ԼՂ հակամարտության կարգավորման, գործընթացն արդյունավետացնելու եւ բանակցային գործընթացը վերսկսելու հեռանկարներին:

ՇՐՋԱՆ

## Սոլանան ժամանեց Բաքու

13 ՓԵՏՐՎԱՐ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ», DW, BBC: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Խավիեր Սոլանան այսօր երկօրյա պաշտոնական այցով ժամանեց Բաքու, որտեղ հայտարարեց, թե բանակցելու է երկկողմանի հարաբերությունների ընդարձակման եւ անվտանգության վերաբերյալ հարցերի շուրջ: Սոլանան ասաց նաեւ, թե Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը պետք է լուծվի ԵԱՀԿ-ի սահմանած սկզբունքների համաձայն: Սոլանան Բաքվում հանդիպեց Ադրբեջանի արտաքին գործոց եւ պաշտպանության նախարարներին: Նա պետք է հանդիպի նաեւ նախագահ Հեյդար Ալիեւին: Ադրբեջանի արտգործնախարար Հասան Հասանովը մինչեւ Սոլանայի ժամանելը Ինտերֆաքսին տրված հարցազրույցում հայտարարել էր, թե Սիլանայի հետ բանակցությունների ընթացքում կքննարկվեն Ադրբեջանի եւ ՆԱՏՕ-ի համագործակցության հեռանկարները՝ «Գործակցություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում: Ադրբեջանի պաշտոնատարներն ասում են, թե իրենց երկիրն այժմ մտադիր չէ մտնել ՆԱՏՕ, սակայն նշում են նաեւ, որ Ադրբեջանն ԱՊՀ միակ երկիրն է, որտեղ չեն տեղակայվել ռուսական զորքերը:

## Օլբրայթը խոստանում է մանրամասն ուսումնասիրել Թուրքիայի վերաբերմունքը հարեւանների հանդեպ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ՆՏ: Ամերիկայի Հայկական ազգային կոմիտեն (ANCA) հաղորդել է, որ Համայնքների պալատում Միջազգային հարաբերությունների հանձնաժողովի ունկնդրումների ժամանակ Նյու Ջերսիից հանրապետական կոնգրեսական Սթիվ Ռոթմանը պետքարտուղար Մադլեն Օլբրայթին անձնական բարձրացրել է Թուրքիայի կողմից Հայաստանի տարածքային շրջափակման հարցը եւ հայտնել կոնգրեսի մտահոգությունը այդ առթիվ:

Ռոթմանը պետքարտուղարի ուշադրությունը հրավիրել է այն փաստին, որ թեեւ Թուրքիան շատերի կողմից ընկալվում է որպես «ԱՄՆ-ի եւ Արեւմուտքի ռազմավարական կարեւոր դաշնակից, փաստը մնում է փաստ, որ նա շրջափակման է ենթարկում Հայաստանը եւ Լեռնային Ղարաբաղի դեմ դիրք գրավում»: Նա պետքարտուղարին խնդրել է մեկնաբանել, թե ինչպես է գնահատում Թուրքիայի դիրքորոշումը Կիպրոսի, Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի հարցերի լուծման գործում:

Պետքարտուղար Օլբրայթը պատասխանել է՝ շեշտելով «Թուրքիայի, կարեւորությունն իբրեւ ռազմավարական դաշնակցի», սակայն ավելացրել, որ «Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի խնդիրները եւս կարեւոր օրինակ են, թե ինչպես է Թուրքիան վերաբերվում իր հարեւաններին, հարցեր, որոնք «մեր կողմից խիստ մանրամասն ուսումնասիրության կարիք ունեն»:

## Բազմաչարչար ԱՊՀ գագաթաժողովը դարձյալ հետաձգվեց

13 ՓԵՏՐՎԱՐ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Անկախ պետությունների համագործակցության գագաթաժողովը, որը պետք է տեղի ունենար մարտի 15-ին, դարձյալ հետաձգվեց: Այդ մասին հաղորդեց ԱՊՀ խոսնակ Էդուարդ Մելնիկովը: Նա գագաթաժողովի հերթական հետաձգման պատճառը չբերեց: Նա չհաղորդեց նաեւ, թե երբ տեղի կունենա գագաթաժողովը, որն առաջին անգամ հետաձգվեց հունվարի 29-ին Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի վատառողջության պատճառով:

## Խավիեր Սոլանան այցելեց Երեւանի մշակութային օջախներ

ԵՐԵՎԱՆ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ՓԱՍՏ: Մինչ Բաքու մեկնելը, փետրվարի 13-ի առավոտյան ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Խավիեր Սոլանան ՀՀ արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանի ուղեկցությամբ այցելեց Երեւանի մշակութային օջախներ՝ լինելով Մատենադարանում, Հայաստանի պատմության պետական թանգարանում եւ Արդի արվեստի թանգարանում: Մատենադարանում Խավիեր Սոլանային եւ նրա ուղեկիցներին ընդունեց Մատենադարանի տնօրեն Սեն Արեւշատյանը: Հյուրերը եղան Մատենադարանի մեծ ցուցադրահում, որտեղ ծանոթացան հայոց հնագույն ձեռագրերին, դիտեցին ողջ ցուցադրությունը: Սեն Արեւշատյանը պրն Սոլանային նվիրեց հայ մանրանկարչության մի պատկերազարդ, որը ձեռագիր մատյաններից ընտրված մանրանկարների բացառիկ ժողովածու է: Պատկերազարդում թանկագին քաժանումներով ներկայացված են հայ մանրանկարչության լավագույն ստեղծագործությունները, որոնք պատկանում են հնագույն հրաժեշտական գործիքներ, զենքեր, արհեստագործական իրեր: Մատենադարանից հետո Խավիեր Սոլանան եղավ Հայաստանի Պատմության պետական թանգարանում, որտեղ թանգարանի փոխտնօրեն Իվետա Մկրտչյանի ուղեկցությամբ դիտեց ցուցադրությունը: Վերջում Խավիեր Սոլանան այցելեց Երեւանի Արդի արվեստի թանգարան:

ԲԱՔՈՒ

## Վաֆա Գուլուզադեն համաձայն է բանակցել «Ադրբեջանի ըմբոստ խաղաքաղաքացիների» հետ

13 ՓԵՏՐՎԱՐ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: RL-ի ադրբեջանական ծառայության բրիգադիրը հաղորդել է, թե նախագահ Ալիեւի գլխավոր խորհրդական Վաֆա Գուլուզադեն չի բացառում առաջիկայում Լեռնային Ղարաբաղի հայ համայնքի առաջնորդների հետ ուղղակի բանակցությունները: Մեկնաբանելով այդ դիրքորոշումը, պարոն Գուլուզադեն հայտնել է, թե արցախահայության ընկալում է իբրեւ Ադրբեջանի ըմբոստ խաղաքաղաքացիների, որոնց հետ բանակցելը նախ ամոթալի չէ եւ, երկրորդ, վաղ թե ուշ անհրաժեշտ է: «Ադրբեջանը ոչ նահանջում է իր դիրքերից, ոչ էլ պատրաստվում է Հայաստանի հետ կիսել Լեռնային Ղարաբաղին վերաբերող իրավունքները», հայտարարել է նախագահի խորհրդականը: Այդ բանակցությունների մասին հստակ որոշում դեռ չի ընդունվել, սակայն Լիսաբոնի հայտնի հայտարարությամբ ստեղծված են հակամարտության կարգավորման իրավական հիմքերը, համարում է Գուլուզադեն: Իր համոզմամբ դա ընդունում է նաեւ Հայաստանը: Վերջին ոլորման համար պարոն Գուլուզադեն հիմք է ընտրել Հայաստանի նախագահի այն հայտարարությունը, որն ըստ RL-ի ադրբեջանական ծառայության հնչում է այսպես. «Սեփական երկրի կազմում Լեռնային Ղարաբաղը տեսնելու համար. Ադրբեջանը պետք է կյանքի տանելի պայմաններ ստեղծի այնտեղ բնակվող հայերի համար»: «Հայաստանը եւս ընդունում է, որ խնդիրը պետք է լուծվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքով», եզրակացնում է Վաֆա Գուլուզադեն:

Վաֆա Գուլուզադեի տեսակետը որոշակիորեն խմբագրել է Ադրբեջանի արտգործնախարար Հասան Հասանովը: Նա բացառել է ուղղակի բանակցությունների հնարավորությունը, եթե Լեռնային Ղարաբաղի հայերը չընդունեն, որ իրենք Ադրբեջանի քաղաքացիներ են:

## Թուրք իսլամները զինվում են

ԱՆԿԱՐԱ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Ենիյուզըլ» թերթը գրում է, որ թուրք հասարակայնությունն անհանգստացած է իր որոշ խավերի զինվելու հարցում միտումից: Թերթի հաղորդման համաձայն, Թուրքիայում 3 միլիոն մարդ որսորդական հրացան ունի, իսկ 1 միլիոն էլ՝ ատրճանակ կրելու իրավունք: «Զաման» թերթը գրել է, որ ամադան տոնի օրերին լրագրերի էջեր էին բաժանվել լուրեր բնակչության կրոնական մասի զինվելու մասին: Հասարակայնությունը ապացույցներ է պահանջում, թե որ մզկիթներում կան զենքի պահեստներ եւ «Բարություն» կուսակցության անդամներից ով է զբաղվում կուսակիցների զինմամբ: Հոդվածում նշվում է, որ չստուգված տեղեկություններ մատուցելը հղի է վտանգավոր հետեւանքներով:

ԹԵՄ ԿԵՏԵՐ

## Սերբական ընդդիմությունը «Ոսկե ձկնիկի» պառավի հետքերով գնաց

13 ՓԵՏՐՎԱՐ, DW, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Սերբական ընդդիմությունը հրաժարվում է բանակցություններ վարել կառավարության հետ: Ընդդիմության առաջնորդ Վուկ Դրաշկովիչը 20 հազար ցուցարարների ներկայությամբ Բելգրադում հայտարարեց, թե բողոքի ցույցերը կդադարեցվեն այն բանից հետո միայն, երբ սոցիալիստական կառավարությունը նախագահ Միլոշեւիչի գլխավորությամբ, պաշտոնանկ կարվի: Եվ դա այն դեպքում, երբ այսօր Բելգրադի ընտրական հանձնաժողովը պաշտոնապես ճանաչեց «Զանեմո» ընդդիմադիր խմբավորման հաղթանակը 1996 թ. նոյեմբերին կայացած տեղական ընտրություններում:

## Իսրայելը շարունակում է օդային հարվածները Լիբանանի տարածքին

13 ՓԵՏՐՎԱՐ, DW: Իսրայելական ռազմական ուղղաթիռներ երեկ հարձակում գործեցին Հարավային Լիբանանի վրա՝ երթեւեկելով այն [illegible] որտեղ ենթադրաբար թաքնվում էին «Հզբոլլահի» մարտիկներ: Հետեւանքների մասին դեռեւս ոչ մի հաղորդագրություն չկա:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

# ՊՄԲԱՑԻԿ

Ժողովրդավարության եւ մարդու իրավունքների կենտրոնը հասատեց 97-ի իր ծրագիրը, ուր ընդգրկված են 16 տարաբնույթ սեմինարներ, կոնֆերանսներ, կլոր սեղաններ: Հարակից 10 առաջարկներ են ներկայացրել նաեւ հասարակական կամ ոչ կառավարական կազմակերպությունները, որոնց, ինչպես տեղեկացրել էր կենտրոնի տնօրեն Վ. Կարմիրշալյանը, առաջնահերթություն է տրվում: Միջոցառումների զգալի մասը կլինի նախորդ տարում սկսածների շարունակությունը: Կալանավայրերում մարդու իրավունքների դաշտպանության խնդիրը կդառնա ավելի մանրակրկիտ ուսումնասիրության առարկա: Շրջանակները այս տարի կընդլայնվեն ներառելով կանանց եւ մանկական զանգվածների խնդիրները: Տեսական քննարկումներից զատ, հարցերը քննության կառնվեն նաեւ կալանավայրերում: Փորձելով իրավիճակի բարելավման ընդհանուր ուղիներ գտնել: Շարունակելով անցյալ տարի սկսած խնդրի լուծման ուղիների որոնումը, կենտրոնը ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի եւ ՀՀ ՆԳ եւ ԱԱ նախարարության հետ համատեղ մշակել է կալանավորների համար աշխատատեղեր ստեղծելու ծրագիր: Սա թույլ կտա լուծել ոչ միայն զբաղվածության, այլեւ մասնագիտություն սովորելու, նոր մասնագիտություն ձեռք բերելու խնդիրը: Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի օժանդակությամբ, Հայաստանի կալանավայրում տեղադրվել են օպտիկիանե իրերի (զարդեր, ջահեր, մասեր) արտադրության սարքավորումներ: Պայմանագիր է կնքվել էլեկտրալամպերի գործարանի հետ: Ամենայն հավանականությամբ 1 ամիս հետո, գործարանի աշխատանքների վերսկսման հետ կգործի նաեւ Հրազդանի արտադրությունը:

«Մարդու իրավունքների ուսուցումը Հայաստանի դպրոցներում» թեմայով սեմինարը կանանց համահայկական միության հետ համատեղ անցկացվեց հունվարի 28-31-ը: Իսկ մոտ ժամանակներս Շիրակի մարզի հասարակական կազմակերպությունների միության հետ կենտրոնի օժանդակությամբ Գյումրիում կստեղծվի մարդու իրավունքների գրադարան: Գյումրիի քաղաքապետարանը լրջորեն է առնագանել մարդու իրավունքների դաշտպանությանը նվիրված միջոցառումների անցկացմանը, այնպես որ, որպես Կարմիրշալյանի կարծիքով, Շիրակը առաջինը կդրսեւորի մարդու իրավունքների նկատմամբ իր ուղղվածությունը: «Աղեսի գոտում խնդիրներ շատ են, շատ են եւ այդ խնդիրները լուծելու մտայնություններ: Հնարավորությունն՞ը: Ամեն ինչ չէ կախված ֆինանսական պայմաններից: Հարգանքը մարդու իրավունքների նկատմամբ ավելի շատ բարոյական չափանիշ է, եւ եղած օրենքների ու հնարավորությունների սահմաններում շատ բան կարելի է անել»:

Նախատեսվում է մի շարք միջոցառումներ անցկացնել Հայաստանի մարզերում:

Պատվիրելով «Վարկած» փորձագիտական խմբին ոչ ծավալուն մի հետազոտություն կրոնական փոքրամասնությունների մասին, կենտրոնը իր հերթին փորձաքննություն է անցկացնում իմանալու խնդրի շուրջ ունեցած կարծիքները: Ամենայն հավանականությամբ 1 ամիս հետո, գործարանի աշխատանքների վերսկսման հետ կգործի նաեւ Հրազդանի արտադրությունը:

«Մարդու իրավունքների ուսուցումը Հայաստանի դպրոցներում» թեմայով սեմինարը կանանց համահայկական միության հետ համատեղ անցկացվեց հունվարի 28-31-ը: Իսկ մոտ ժամանակներս Շիրակի մարզի հասարակական կազմակերպությունների միության հետ կենտրոնի օժանդակությամբ Գյումրիում կստեղծվի մարդու իրավունքների գրադարան: Գյումրիի քաղաքապետարանը լրջորեն է առնագանել մարդու իրավունքների դաշտպանությանը նվիրված միջոցառումների անցկացմանը, այնպես որ, որպես Կարմիրշալյանի կարծիքով, Շիրակը առաջինը կդրսեւորի մարդու իրավունքների նկատմամբ իր ուղղվածությունը: «Աղեսի գոտում խնդիրներ շատ են, շատ են եւ այդ խնդիրները լուծելու մտայնություններ: Հնարավորությունն՞ը: Ամեն ինչ չէ կախված ֆինանսական պայմաններից: Հարգանքը մարդու իրավունքների նկատմամբ ավելի շատ բարոյական չափանիշ է, եւ եղած օրենքների ու հնարավորությունների սահմաններում շատ բան կարելի է անել»:

Նախատեսվում է մի շարք միջոցառումներ անցկացնել Հայաստանի մարզերում:

Պատվիրելով «Վարկած» փորձագիտական խմբին ոչ ծավալուն մի հետազոտություն կրոնական փոքրամասնությունների մասին, կենտրոնը իր հերթին փորձաքննություն է անցկացնում իմանալու խնդրի շուրջ

ԾՐԱԳԻՐ

# Սեփական իրավունքների գիտակցում՝ կալանավորներից մինչեւ միգրանտներ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Է ԿՆՔՎԵԼ ԷԼԵԿՏՐԱԼԱՄՊԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՀԵՏ: ԱՄԵՆԱՅՆ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ 1 ԱՄԻՍ ՀԵՏՈ, ԳՈՐԾԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐՍԿՍՄԱՆ ՀԵՏ ԿԳՈՐԾԻ ՆԱԵՎ ՀՐԱԶԴԱՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ:

«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ՍԵՄԻՆԱՐ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԱՆՑԿԱՑՎԵՑ ՀՈՒՆՎԱՐԻ 28-31-Ը: ԻՍԿ ՄՈՏ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՍ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԵՆՏՐՈՆԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ԿՍՏԵՂԾՎԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ: ԳՅՈՒՄՐԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ԼՐՋՈՐԵՆ Է ԱՌԱԳԱՆՔԵԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆԸ, ԱՅՆՊԵՍ ՈՐ, ՊՐՆ ԿԱՐՄԻՐՇԱԼՅԱՆԻ ԿԱՐԾԻՔՈՎ, ՇԻՐԱԿԸ ԱՌԱՋԻՆԸ ԿԴՐՍԵՎՈՐԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ: «ԱՂԵՍԻ ԳՈՏՈՒՄ ԽՆԴԻՐՆԵՐ ՇԱՏ ԵՆ, ՇԱՏ ԵՆ ԵՎ ԱՅԴ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄՏԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ՞ՐԸ: ԱՄԵՆ ԻՆՉ ՉԷ ԿԱԽՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ: ՀԱՐԳԱՆՔԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՎԵԼԻ ՇԱՏ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇ Է, ԵՎ ԵՂԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՇԱՏ ԲԱՆ ԿԱՐԵԼԻ Է ԱՆԵԼ»:

ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ՄԻ ՇԱՐՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ:

ՊԱՏՎԻՐԵԼՈՎ «ՎԱՐԿԱԾ» ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻՆ ՈՉ ԾԱՎԱԼՈՒՆ ՄԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԿԵՆՏՐՈՆԸ ԻՐ ՀԵՐԹԻՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ Է ԱՆՑԿԱՑՆՈՒՄ ԻՄԱՆԱԼՈՒ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ ՄԱԾԱՅՆ, ԱԺ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԻ 3 ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՄՓՈՓ ՏԵՍՔՆ:

ԱՅՍ ՕՐԵՐԻՆ, ՄԱԿ-Ի ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԵԿՏԵՂ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ, ՈՐԻ ՆՊԱՏԱԿՆ Է ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ԱՇՈՐԻՆԱԿԱՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ: ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՆ ԳՏՆՎՈՒՄ ՍՈՑԻՈԼՈԳՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆ Գ. ՊՈՂՈՍՅԱՆԸ ԵՎ ՀԵՌՈՒՍԱՏՐԱԳՐՈՂ Ս. ԵՐԻՑՅԱՆԸ Վ. ԿԱՐՄԻՐՇԱԼՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ: ԱՅՍՊԻՍԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՏԵՂԱՓՈԽՎԵԼՈՒ ՄՏԱՀՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ՏԱԼՆ Է, ՍԵՓԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՆ ԾԱՆՈԹԱՑՆԵԼԸ:

ԱՅՍ ՏԱՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՄԲ ԳԲԱՈՒՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՔՆԹԱՑԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ԻՐԱՏԱՐԱԿԵԼ Է «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ» ՃԵՌՆԱՐԿԸ:

Ա. Գ.

# Մաթյու Սավիջ. «Կովկասը մեր ռազմավարական հետաքրքրությունների ոլորտում է»

Երեւանում գտնվող Բրիտանական խորհրդի ԱՊՀ երկրների տնօրենության մենեջեր Մաթյու Սավիջը երեկ փետրվարի 13-ին, «Արմենիա» հյուրանոցի բիզնես տահում հանդիպման էր հրավիրել լրագրողներին «Մեծ Բրիտանիայում ֆինանսիստների վերադասրասման» ծրագրին ծանոթացնելու նպատակով («Ազգը» ծրագիրը ներկայացրել է նախորդ համարում): Բրիտանական խորհուրդը կազմակերպություն է, որը զբաղվում է Միացյալ Թագավորության եւ արտասահմանյան երկրների միջեւ փորձի փոխանակմամբ, մասնավորապես մշակույթի եւ գիտելիքների ոլորտում: Այսօր այն ունի ներկայացուցչություններ աշխարհի տարբեր 200 երկրներում եւ 1998-ին նախատեսում է բացել գրասենյակ նաեւ Երեւանում: Պարոն Մաթյու Սավիջը խորհրդի մոսկովյան գրասենյակի ներկայացուցիչն է, որը լիազորված է «զբաղվել» նաեւ Կովկասյան տարածաշրջանով: Այսպես 1996-ից Թբիլիսիում արդեն գործում է Բրիտանական խորհրդի կենտրոն, որն ամենամոտ ապագայում խոստանում է վերածվել լիակատար օֆիսի: Խոսելով Հայաստանի մասին, պարոն Սավիջը ընդգծեց այն հետաքրքրությունը, որը ներկայումս նկատվում է Բրիտանիայի ֆինանսական շրջանակներում մեր հանրապետության վերաբերյալ: Մասնավորապես, նա նշեց, որ արդեն գործում է հայ-բրիտանական առաջին ձեռնարկությունը Միդլենդ Արմենիա բանկը, եւ «դա մեր համագործակցության միայն սկիզբն է»: Պարոն Սավիջն իր հիացմունքը հայտնեց հայ ղեկավարության, ճարտարապետության, մշակույթի եւ գլխավորապես հայ մարդու մտավոր ունակությունների վերաբերյալ: Նա նշեց, որ Կովկասի տարածաշրջանը ռազմավարական առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում Մեծ Բրիտանիայի համար, ինչով եւ պայմանավորված է հիշյալ ծրագրի «ներմուծումը» Հայաստան: Ծրագիրը հնարավորություն է ընձեռում հայ ֆինանսիստներին արժեքավոր աշխատանքային փորձ ձեռք բերել բրիտանական բանկերում եւ ֆինանսական այլ հաստատություններում: 1993-ին ստեղծված այս ծրագիրն ամենից նպատակահարմարն ու արդարացվածն է համարվել այլ նմանատիպ ծրագրերի շարքում, որ ներկայացված էին նախագծեր նաեւ Եվրահանձնաժողովի կողմից: Այն ենթադրում է վերադասրասման երեք փուլ (այդ մասին հաղորդակցություն կա մամուլում), ծանոթացում նորագույն տեխնոլոգիաների հետ եւ բրիտանական բանկերում ժամանակավոր աշխատանքի բացառիկ հնարավորություն: Ամբողջ ծրագիրն արժե շուրջ 20 մլն ֆունտ ստեղինգ (շուրջ 30 մլն դոլար):

Ինչո՞վ է պայմանավորված նման «բանկ» նախաձեռնությունը: Այս հարցին Մաթյու Սավիջն արձագանքեց բավականին անկեղծորեն. «Հաշվի առնելով այն մեծ ներուժը, որ նկատելի է հայերի մեջ, ինչպես նաեւ ֆինանսական նոր կառույցների ստեղծումը, մենք ցանկություն ունենք, որ այդ կառույցները զարգանան բրիտանական եղանակով: Բացի այդ, շատ չափազանցված չեմ լինի, եթե ասեմ, որ անգլերեն լեզվի տարածումը եղել եւ մնում է Մեծ Բրիտանիայի գլխավոր քաղաքականությունը»:

Հայ ֆինանսիստների 10-15 հոգիանոց առաջին խումբը Մեծ Բրիտանիա կմեկնի 1997-ի ամռանը, նախապես բնականաբար անցնելով հետամաղտասասխան ընտրություն: 22-35 տարեկան թեկնածուները (պարտադիր է անգլերենի իմացությունը եւ առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ ֆինանսա-վարկային ասպարեզում), պետք է լրացնեն անձնական թերթիկ, առավարտ ամսին անգլերենի տեսավորում, առդիլին հարցազրույց բրիտանական մեկ բանկիրի, Բրիտանական խորհրդի ներկայացուցչի եւ հայաստանյան բանկային կառույցների մեկ ներկայացուցչի հետ:

«Մենք ակնկալում ենք դիմումներ առնել այս ամսին», ասաց Մաթյու Սավիջը, ցավով նշելով, որ ծրագիրը կգործի Հայաստանում ընդամենը մեկ տարի (այսինքն եւս մեկ անգամ մի այլ խումբ կմեկնի Բրիտանիա) եւ 1998-ի ամռանը կավարտի իր առաքելությունը: Այնուամենայնիվ, նա համոզմունք հայտնեց, որ շուտով կբացվեն հայ-բրիտանական համագործակցության նոր ասպարեզներ:

Ա. Դ.

ՀԱՄԱՌՈՏ

## Գիտաժողովը կնվիրվի հայ-իտալական հարաբերություններին

ԵՐԵՎԱՆ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թուրինում (Իտալիա) մարտի 3-7-ը կանցկացվի հայ-իտալական պատմամշակութային հարաբերություններին նվիրված միջազգային գիտաժողով, որտեղ զեկուցումներով հանդես կգան նաեւ Հայաստանի պատմագետներ եւ արվեստաբաններ, հայտնեցին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արտաքին կապերի բաժնում:

## Երկու նախարարությունները միացնելու մասին լուրերը միայն ասեկոսեներ են

ԵՐԵՎԱՆ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Երեւանում համառորեն լուրեր են պտտվում, թե առողջապահության եւ սոցիալական ապահովության նախարարությունները պետք է միավորվեն: Առողջապահության նախարարի առաջին տեղակալ Դերենիկ Դումանյանը եւ սոցիալական ապահովության նախարարի տեղակալ Գագիկ Եգանյանն ասացին, որ այդ մասին իրենց ոչինչ հայտնի չէ: Լուրերը մնում են փողոցային խոսակցությունների մակարդակում:

## «Հայավիաբանկը» չլուծարվեց, բայց իր պարտքերը պետք է մարի 18 ամսվա ընթացքում

ԵՐԵՎԱՆ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ինչպես արդեն հաղորդվել է, Կենտրոնական բանկը «Հայավիաբանկ» փակ բաժնետիրական բանկը լուծարելու հայցով այս տարվա հունվարի 7-ին դիմել էր Երեւանի Սպանդարյանի ժողդատարան: «Հայավիաբանկ»-ը դատարան է ներկայացրել բանկի ֆինանսական առողջացման ծրագիր, որը հիմնված է արտասահմանյան ֆիրմաներից բանկին լրացուցիչ ֆինանսական օգնություն տրամադրելու վերաբերյալ պայմանագրերի վրա: Ինչպես տեղեկացրին ԿԲ լրատվական կենտրոնից, քննարկելով այդ ծրագիրը, դատարանը վճռել է «Հայավիաբանկի» նկատմամբ հաստատել խնամակալություն, հաշվի առնելով, որ այդ դեպքում բանկն իր պարտավորությունները առավել մեծ չափով կարող է կատարել, քան եթե անմիջապես լուծարվեր: Բանկը հնարավորություն է ստացել ԿԲ-ի եւ դատարանի մշտական հսկողության տակ իրականացնել ֆինանսական գործառնություններ, առաջնահերթ նպատակ ունենալով իր պարտքերի մարումը՝ 18 ամսվա ընթացքում:

## Իրանահայ լրագրողի նվերները սպիտակցիներին

Իրանահայ լրագրող-միջազգայնագետ Ժանեթ Լազարյանը 6-12 տարեկան երկկողմանի եւ միակողմանի ծնողազուրկ սպիտակցի 50 երեխաների նվերների փաթեթներ էր ուղարկել, որը բաշխվեց օրերս: Նվիրատվությունը տեղ հասցնելուն եւ բաշխելուն աջակցել են «Հայագրոբանկի» խորհրդի եւ վարչության անդամները, Սպիտակի քաղաքապետարանը եւ «Սպիտակ» հիմնադրամը:

ՄԱՆՎԵԼ ՄԻՔԱՅԵԱՆ
Վանաձոր

# Սպառողների միությունը առաջարկում է հոսանքի սակագների նոր կարգ

Եվրասիա հիմնադրամի հովանավորությամբ 22.261 դոլարի սահմաններում շնորհ է տրվել ՀՀ սպառողների միությանը: Միության ընթացիկ աշխատանքները առնչվում են հացի վաճառքի հիգիենիկ պայմաններին, ներմուծվող սննդամթերքի որակին, հոսանքի սակագներին: Առաջին երկու հարցերի ուղղությամբ թերեւս պարզ չէ, թե միությունն ինչ աշխատանքներ է կատարել, եւ որքանով է այն իր արդյունքն ունեցել, ինչպես նաեւ ամբողջովին պարզ չեղավ, թե ինչպես են տնօրինվել այդ գումարները, իսկ աշխատանքներից վերջինի վերաբերյալ, որն առնչվում է էներգետիկայի սպառման խնդրին, միության նախագահ Արմեն Պողոսյանը երեկ հրավիրել էր կլոր սեղան, որին ներկա էին էներգետիկայի նախարարության զարգացման վարչության գլխավոր մասնագետ պարոն Խաչատրյանը եւ լրագրողներ:

Միության նախագահը մանրամասնեց հանդիպման նպատակը եւ նշեց, որ միությունը նոյեմբեր ամսվա ընթացքում կատարել է մոտ 594 ընտանիքների հարցումներ, պարզվել է, որ ընտանիքների միայն 3 տոկոսն է սպառել 100 կվտ-ից պակաս հոսանք, մինչեւ 200 կվտ սպառել է 19,4 տոկոսը:

Սպառողների միությունը ներկա գործող գների համեմատ առաջարկում է ավելի դիֆերենցված տարբերակ՝ մինչեւ 100 կվտ սպառողները սպառված էներգիայի դիմաց վճարեն 10 դրամ, երկրորդ հարյուրի՝ 15 դրամ, երրորդի՝ 20 դրամ, իսկ 300-ից բարձրի համար՝ 30 դրամ: Ըստ այս կարգի, առանց բացառության, բոլորը կձգտեն օգտվել զեղչից (սպառեն մոտ 300 կվտ): Արդյունքում որոշ չափով կտեսնեն ֆիզ եկամուտ ունեցողները եւ կլուծվի սոցիալական արդարության խնդիրը, խնայողաբար մոտեցում կլինի սպառված հոսանքի նկատմամբ, քանի որ հարցման դեպքերը փաստել են, որ կան ընտանիքներ, որոնք սպառում են 700-1500, ընդհուպ մինչեւ 4000 կվտ հոսանք: Կբարձրանա ընդհանուր գանձման գումարը՝ էներգետիկայի համակարգը եւ պետբյուջեն ներկա գների համեմատ 9 տոկոսից ավելի ներմուծում կունենա, եւ որ նման կարգի հաստատումը ֆինանսական եւ տեխնիկական որեւէ խնդիր չի պահանջում:

Առաջարկի վերաբերյալ էներգետիկայի նախարարության ներկայացուցիչը դրական արտահայտվեց եւ նշեց, որ կուսումնասիրվեն հաշվարկները եւ կքննարկվեն որոշ հարցեր, որից հետո կներկայացվի կառավարություն:

ԱՐԱՔՍ ՍԱՖԱՐՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թող 562941, AT&T (37421) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրեն
ՍՍՐԳԻՍ ՍՍՐԳՍԵԱՆ / հեռ. 562863
A STYLE համակարգչային
ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային ծառայություն
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

# ՈՒՇԱԳԻՏ

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## Տեառնընդառաջ

Տեառնընդառաջը խառասնօրյա Յիսուսին տաճարին ընծայելու օրվա հիշատակությունն է: Հովսեփը եւ Մարիամը, Մովսեսի օրենքի համաձայն, խառասնօրյա Մանուկ Հիսուսին տաճար տարան, Աստծուն ընծայելու համար: Այնտեղ Սիմեոն Ծերունին, որին խոստացվել էր աչքերը չփակել մինչեւ որ չտեսնի Օծյալ Փրկչին, ընդառաջ եկավ, գրկեց մանկանը եւ օրհնություն ու փառք տվեց Աստծուն, որն իրեն արժանի դարձրեց տեսնելու Իսրայելի Փրկչին: Օրհնեց մանկանը Սիմեոն Ծերունին եւ ասաց. «Տեր, քո ծառային խաղաղությամբ արձակի՛ր, որովհետեւ ես տեսա այն Փրկչին, որին դու ուղարկել ես բոլոր ազգերի համար. ես տեսա այն լույսը, որ պիտի լուսավորի հեթանոսներին, եւ այն է փառքը, որ Քո Իսրայելի ժողովրդի համար է»:

Տեառնընդառաջի տոնը կատարվում է փետրվարի 14-ին, որպես անշարժ տոն: Փետրվարի 13-ի երեկոյան ժամերգությունից հետո տեղի է ունենում նախատոնակ, անդաստան, բաժանվում են մոմեր, եւ եկեղեցականը հանդիսավոր վառում է աստյանի մեջ սեղանի վրա դրված մոմերը: Ժամերգությունից հետո հավատացյալները վառում են իրենց մոմերը եւ տանում տուն:

Եկեղեցական արարողությունից հետո, հինավուրց սովորության համաձայն, եկեղեցու բակում կրակ է վառվում: Հրավառության մասին քրիստոնեական եւ եկեղեցական որեւէ օրենք կամ կանոն գոյություն չունի: Ընդհակառակը՝ տոնացույցում կրակ վառելը եւ շուրջը պտտվելը համարվում է խոտելի, դատապարտելի՝ որպես հեթանոսական շրջանից մնացած սովորություն:

Տեառնընդառաջը ժողովրդական լեզվով անվանվում է Տըրընդեզ:

Տեառնընդառաջը բացատրվում է որպես «ելանել ընդ առաջ Տեառն», «ընդառաջ գնալ, դիմավորել Տիրոջը»:

Հեթանոսական կրոններում մեծ տեղ էր գրավում կրակի պաշտամունքը: Կրակը Արեւի եւ Լույսի խորհրդանիշն էր: Հեթանոսական տաճարներում կրակարաններ կային, ուր վառվում էր մշտնջենական կրակը: Այսօր զրադաշտականները գիշերուզօր վառ են պահում ատրուշանի կրակը: Կրակը նրանց համար համարվում է նվիրական սրբություն:

Սովորաբար Տեառնընդառաջի հրավառությունը վերագրվում է հայոց Տիր աստծուն: Տիրը երազների մեկնիչն էր եւ դորության ու արվեստի պաշտպանը: Ավանդության համաձայն, նա աստվածների եւ քրմերի միջնորդն էր, հայտնում էր երազների գաղտնիքը, ուսուցանում գիտություններ՝ համարվելով աստվածների գրագիրը: Այդ մնացած «գրողը տանի» ասույթը նրան է վերագրվում:

Տիրի անունով էր կոչվում հայկական հին ամիսներից մեկը՝ Տրեզ: Ս. Մալխասյանցի սուգաբանության համաձայն, «Տրեզ» պահլավերեն նշանակում է Շնիկ աստղ՝ պարսկական արեգակնային օրացույցի չորրորդ ամիսը:

Տեառնընդառաջի համար գործածվող ժողովրդական «Տերընդաս»-ը, պարսկական ձեւով «Տիրենդազ»-ը, նշանակում է նեստաձիգ եւ ժամանակին համարվել է Տիր աստծուն նվիրված տոներից մեկը:

Տեառնընդառաջի հրավառությունը, իր երեւույթից դատելով, առավելաբար պատկանում է Միհր աստծուն՝ որպես կրակի աստծու: Միհրը հայոց լույսի, արեւի եւ կրակի աստվածն էր: Նա համապատասխանում է Մեթրային, որպես լույսի եւ արեւի աստված: Նրա մեհյանը գտնվում էր Բարձր Հայքի Դերջան գավառի Բագայարիճ ավանում: Տիգրան Բ-ն նույն տեղում կանգնեցրեց հունաց Հեփեստոս աստծո արձանը: Հեփեստոսը Զեւսի եւ Հերայի որդին էր եւ կրակի ու դարբնության աստվածը: Հայկական տոմարում Միհր աստծո անունով կա Մեհեկան ամիսը: Մեհեկան անունը կազմվում է պարսկական Միհր (արեգակի) աստծո անվան հետ: Մեհեկանի 1-ը համապատասխանում է փետրվարի 7-ին:

Թվում է, մի փոք է տիրում այստեղ, եւ առավել լուսաբանության կարոտ է զգում այն հարցը, թե հեթանոսական շրջանից մնացած հրավառության սովորությունը հայոց դիցաբանության մեջ ո՞ր աստվածության հետ է առնչվում: Ցարդ ընդունված կարծիքն այն էր, որ հրավառությունը Տիր աստծուն հատուկ պատշամունք էր, բայց երեւույթների ուսումնասիրությունը, մանավանդ հրավառությունը, ինչպես նաեւ Մեհեկան ամիսը փետրվարին համապատասխանելը այն եզրակացության են հանգեցնում, որ Տեառնընդառաջի փետրվարի 14-ի տոնակատարությունը առավելաբար առնչվում է Միհր աստծո հետ:

Տեառնընդառաջի գիշերը, ոմանք մի պղնձի գդալ ու պնակ վերցնելով, պտտում էին տնեստուն, գդալը խփում են պնակին ու նվերներ հավաքում:

Ժամանակին գոյություն են ունեցել Տեառնընդառաջի տոնի հետ կապված ազգային հեթանոսական սովորություններ ու ավանդություններ, որոնք այժմ գրեթե մոռացվել են:

Հին Ջուղայում փոքր դեզ էին պատրաստում եկեղեցու բակում: Հանդիսության ժամանակ, երիտասարդները վառված մոմերը ծեռքերում, շարքով կանգնում էին դեզի առաջ: Երբ քահանան, կարգը կատարելով, իր մոմով առաջինը վառում էր դեզը, նրան էին հետեւում նորապսակները:

Երիտասարդները վառած մոմերով վերադառնում էին տուն, ուր նախապես արդեն պատրաստվում էին փոքրիկ դեզեր, որոնք վառվում էին այդ մոմերով: Բոլորի տանիքներին, առանց բացառության, պետք է լինեին փոքրիկ դեզեր: Վառած դեզի վրայով լոք էին տալիս, այսինքն ցատկում էին: Նորապսակ երիտասարդի բարեկամները, այդ երեկոյին, նորահարսի համար բերում էին պես-պես ուտելիքներ ու նվերներ, որոնք կոչվում էին խոնչա:

Շիրակում եւ Բասենում դեզ վառելու իրավունքը նույնպես տրված էր նորապսակներին: Այնտեղ կնքամայրը հարսի համար բերում էր խոնչա եւ հարսին բարձրացնում էր երդիկի վրա: Վաղարշապատում եւ շրջակա գյուղերում նորահարս ունեցող տունը հրավիրում էր աղջիկներին եւ հարսներին՝ Դըրընդեզի տոնը կատարելու:

Դարալագյազի գաղթական ժողովրդի մեջ Ազատեկ, Մարտիրոս, Հոռադիզ, Սեւ գյուղերում դեզ վառելու իրավունքը նույնպես քահանայից հետո տրվում էր նորապսակ երիտասարդներին, որոնք ջուղացիների նման վերադառնում էին տուն՝ վառած մոմերով իրենց դեզերը վառելու համար: Երբ քահանան կարդում էր Ավետարանի այն հատվածը, ուր Սիմեոն Ծերունին ասում է Մարիամին. «Ընդ քո իսկ անձն անցցէ սուր», իսկույն յուրաքանչյուրը ծածուկ կերպով դանակով կտրում էր մոմի մի կտոր եւ պահում, որպեսզի օձը երբեք չխայթի իրեն:

Բազմազան այլ սովորույթներ կային նաեւ Արեւմտյան Հայաստանում, Կիլիկիայում, Պոլսում եւ հայրենի բոլոր գյուղերում:

Տեառնընդառաջը վանեցիները կոչում էին Տենդառաջ: Նախատոնակին քահանան եկեղեցի էր հրավիրում նույն տարվա մեջ ամուսնացած փեսաներին, որպեսզի շարիկ հագնեն եւ ժամերգության մասնակցեն: Արարողությունից հետո եկեղեցու բակում խարույկ էին վառում եւ եկեղեցական թափորը նորափեսաների հետ խարույկի շուրջ էր դառնում երգելով: Փեսաներն ու հարսները ցատկոտում էին կրակի վրայից:

Երկրագործները ուշադրությամբ դիտում էին Տերընտասի կրակի ուղղությունը, որպեսզի ծաղկազարդից հետո իմանան այնտեղի բերրիությունը:

Տերընդեզի կրակն իր հետ բերում էր օդի բարեխառնություն, հունձքի առատություն, արտերի բերրիություն եւ ամուսինների օրհնություն:

Տըրընդեզի հրավառությունից հետո փեսան իր աներոջ տուն գնալու իրավունք էր ստանում: Այն կոչվում էր նաեւ «խզեսցուք զկաղանսն», կաղանից դուրս էր գալիս փեսան եւ ազատորեն գնում աներոջ տուն: Երեխաներին եկեղեցի էին տանում, որպեսզի քահանան օրհնի: Վերադարձին մայրը երեխայի աչքը համբուրում էր եւ նվեր տալիս: Նրան հետեւում էին ազգականները:

Սղերդում Տեառնընդառաջը կոչվում էր Մելեք: Նախատոնակի երեկոյան կանայք ու աղջիկները մեկ-մեկ լաստեր առած գնում էին եկեղեցի, իսկ տղամարդիկ իրենց հետ տանում էին չոր փայտեր:

Ժողովրդական վերոհիշյալ սովորություններից պարզվում է, որ Տեառնընդառաջի խարույկը, առավելաբար, առնչվում էր նորահարսերի եւ բերքի օրհնության հետ, որին հետագայում միացել է մանուկների օրհնությունը: Հետեւաբար, Տըրընդեզը հեթանոսական շրջանից նորապսակների հետ կապված տոնակատարության եւ հավատալիքի մնացորդը կարելի է համարել:

Տեառնընդառաջի շարականները վերագրվում են Մովսես Քերթողին: Շարականները պատմում են Սբ. Կույսից մարմին ստացած Քրիստոսի տաճար բերվելը, ընծայումը, գովերգվում է նաեւ Սիմեոն Ծերունին եւ հետո մարդեղության խորհուրդն է հիշատակվում «Անսկիզբ բանի» Սբ. Կույսից մարմին ստանալու մեջ:

Եկեղեցու արարողության ծիսական բաժինը՝ մոմ վառել, «ճրագ լուցանել», անդաստան կատարել, վերապրեցնում են հայկական հին սովորություններ:

ԱՐՄԱՆ ԲԱԲԱՅԱՆՅԱՆ

ՇՈՒԿԱ

## Երեւանյան աղի իրացումը տուժում է ադրանքային տեսքի պատճառով

ԵՐԵՎԱՆ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՍԵՆՊԵՍ: Զրկվելով արտաքին շուկայից, Ավանի աղի հանքի կոմբինատը ներկայումս դժվարությամբ է իրացնում իր արտադրանքը նաեւ հանրապետության շուկայում:

«Խնդիրն այն է, ասաց կոմբինատի փոխտնօրեն Համբարձում Սեդրակյանը, որ շուկայում մրցակցության մեջ է մեր եւ իրանական աղը: Վերջինս, լինելով ծովի աղ, արտաքուստ մաքուր է, թափանցիկ, պատշաճ փաթեթավորմամբ, ինչն իրականացվում է Հայաստանի մասնավոր ձեռնարկությունների կողմից: Մինչդեռ որակական առումով, ինչպես ցույց է տալիս հանրապետական սանէպիդկայանում կատարված հետազոտությունը, երեւանյան աղը մի քանի անգամ գերազանցում է իրանականին թե հականեխիչ ներգործության, թե մթերքի որակի երկարատեւ պահպանման առումով»:

Կոմբինատն, ըստ փոխտնօրենի, տարեկան կարող է արտադրել 40 հազար տոննա կերակրի աղ, իսկ Հայաստանի պահանջարկը 10 հազար տոննա է: Անցած տարի թողարկվել է 9 հազար տոննա՝ կերակրի եւ 6 հազար տոննա տեխնիկական աղ: Մյուս սպառողը Վրաստանն է, ուր անցյալ տարի արտահանվել է 7 հազար տոննա աղ:

Այն հարցին, թե աղի փաթեթավորման գործում ինչու չեն ներգրավում տեղի ձեռներեցներին, գլխավոր ինժեներ Պրն Գալստյանը պատասխանեց. «Սակավ են մեր միջոցները, փաթեթավորումը կատարում ենք մեր հնարավորության սահմաններում»:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

## Փետրվարի 13-ը՝ աղագաղութացման օր

Ուղիղ 9 տարի առաջ Ստեփանակերտում կայացավ առաջին հանրահավաքը, որի ընթացքում դարաբաղյան շարժման ակտիվիստները խորհրդային իշխանություններից պահանջեցին ԼՂԻՄ-ը վերամիավորել Հայաստանի հետ: Այսօր այդ օրը ԼՂՀ-ում պաշտոնապես չի նշվում: Ստեփանակերտի անկախ դիտորդների կարծիքով, փետրվարի 13-ը ԼՂՀ ԱԺ-ի կողմից պետք է հայտարարվի որպես Աղագաղութացման օր: Ըստ այդ կարծիքի, դա ճիշտ կլիներ նախեւառաջ քաղաքական տեսանկյունից, քանի որ աշխարհում գոյություն ունեն ազգային ազատագրական պայքարում ազատագրված բազմաթիվ պետություններ եւ ժողովուրդներ:

Նույն աղբյուրների համոզմամբ, չէր խանգարի նաեւ, որ ԼՂՀ արտգործնախարարությունը պաշտոնապես դիմեր լատինամերիկյան, աֆրիկյան եւ Կենտրոնական Ասիայի մի շարք պետությունների ներկայացուցիչներին, հրավիրելով նրանց մասնակցելու համաարցախյան տոնակատարությանը:

## Նոր նշանակումներ ԼՂՀ-ում

ԼՂՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հատուկ հրամանագրով հանրապետության ԱԱ պետվարչության պետ է նշանակվել Ալեքսանդր Աղասարյանը: Նա միաժամանակ զբաղեցնում է ռազմագերիների, պատանդների եւ անհետ կորածների հարցերով ԼՂՀ պետհանձնաժողովի նախագահի պաշտոնը:

Վարչապետ Լեւոնարդ Պետրոսյանի որոշմամբ, Էդուարդ Աղաջանյանը նշանակվել է ԼՂՀ կառավարության աշխատակազմի բնակարանաշինության զարգացման վարչության պետի պաշտոնակատար:

Վարչապետի մեկ այլ որոշմամբ, ԼՂՀ «Արցախտրանս» պետձեռնարկության գլխավոր տնօրեն է նշանակվել ներկայումս լուծարված ԼՂՀ արդյունաբերության նախարարության նախկին նախարար Գուրգեն Ներսիսյանը:

Ա. Ա.

ՀԱՅ ՀԱՆԱՊԱԶՕՐՅԱ

## «Աշխատող մարդը կմրսի՞...»

Վրա հասած ցրտերը բարդացրին բացօթյա առեւտրով զբաղվող մեր համաքաղաքացիների վիճակը: «Աշխատանքային պայմանները» կոչացել են, վտանգավոր դարձել առողջության համար, հատկապես մայրաքաղաքում մոլեգնող գրիպի պայմաններում: Օրվա «հացի փողն» առավել քան երբեւէ դժվարությամբ է տրվում տնավաճառներում (հաճախ ընտանյոք հանդերձ) հարեւան պետություններից «զբոսաշրջիկային» ուղիներով ձեռք բերված պարենն ու հագուստն իրացնող առեւտրականներին: Վերջիններս միշտ չէ, որ «ավարով» են ավարտում օրը. երբեմն ամբողջ օրը կորցնելով դրսում, ձեռնունայն են վերադառնում տուն, չնայած որոշ աղրանքներ գնման գնով վաճառելու պատրաստակամությանը ավելի նպաստավոր ժամանակների ակնկալիքով: Իսկ նպաստավոր ժամանակները, դատելով օրեցօր արժեզրկվող, ինչպես կասեր ՀՀ Սահմանադրության կնքահայր, «ԱԺ գրավումից» հետո իրատեսությունը վերագտած խորհրդարանական Էդուարդ Եգորյանը, «փայտացող» հայրենական դրամարժույթից հետո են, քանի որ գների սահող բարձրացումը, էլեկտրաէներգիայի, ուղեվարձի, հեռախոսավարձի առաջիկայում սպասվող բանկացման զուգակցությամբ, առեւտրի աշխուժացման լավագույն նախապայմանը չէ:

Յուրաքանչյուրն նոտարագրել է մուրացկանների շարքը մեծամասամբ բոշակառուներ՝ որոնց առողջությունը հասկանալի է, հարմարեցված չէ ձմեռային «ցոնոան-գրտին»: Վատացել են հատկապես ա-ննկուն աշխատավորները, սակայն, դժվարությամբ, բայց հետեւողականորեն շարունակում են սպասարկել նրանց, ովքեր այսօր էլ հավատարիմ են սիրելի զբաղմունքին: Ամիրյան փողոցի մի անկյունում արեւածաղկի սերմ վաճառող մի կին, օրինակ, զայրույթով է արձագանքում անցորդների կարեկցական դիտողություններին. «Էս գրտին մեղք չե՞ս, առավոտից իրիկուն չարչարվում ես...»: «Աշխատող մարդը բա կմրսի՞»," բարձրաձայն «արդարանում էր» նա՝ հերթական հետաքրքրասերի հարցին ի պատասխան. «Էնքա՞ն շոր եմ հագել որ...»: Երբ այնուամենայնիվ, չնայած կնոջ զայրույթը վերաբորբոքելու վտանգին, փորձեցի պարզել, արդյոք նկատաբերությունն արդարացնո՞ւմ է աշխատանքի «վնասակարությունը», կինը (ամենայն հավանականությամբ բոշակառու) խոր հոգոց քաշեց. «Աղջիկ ջան, հացի փող չեմ հանում...»:

Այդ դժվարացել է աշխատող մարդու գործը փետրվարյան գրտին. եւ, ցավոք, նույնիսկ... չմրսելու դեպքում:

ԼՈՒԻԶ ՊՈՂՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ **տեղեկատվական**

# Ինչ ենք հակադրում Ադրբեջանի պարտադրած քարոզչական պատերազմին

Ադրեն հինգ տարի է, ինչ հանրապետությունում զգացել է տալիս պետական քարոզչության աննեղելի դասիվությունը: Այդ ընթացքում չի հաջողվել ստեղծել արտաքին հասարակական կարծիքի վրա ներազդման որևէ լուրջ համակարգ, չնայած այդ նպատակով հիմնվել էր (ավելի շատ փորձ էր արվել) տեղեկատվության նախարարություն մեծաքանակ աղարտով ու բավականին հզոր միջոցներով (հրատարակչություններ, տպարաններ, հեռուստատեսություն, ռադիո, լրատվական գործակալություն, մամուլ...):

Այս բացը առավել զգալի դարձավ ԵԱՀԿ-ի լիսաբոնյան գագաթաժողովում, երբ պարզ դարձավ, որ եվրոպական երկրների մեծամասնությունը, մերժելով Ղարաբաղի հայության ինքնորոշման իրավունքը, գերադասությունը տալիս է Ադրբեջանի Հանրապետության ամբողջականության պահպանմանը: Հենց Լիսաբոնում առավել ցայտուն երևացին քարոզչության ասպարեզում Ադրբեջանի և Թուրքիայի միասնական ակտիվ ու մեծածավալ աշխատանքն ու դրա պտուղները: Վերջին տարիներին նրանք լրատվական միջազգային տուկան լցրել են անգլերեն ու այլ լեզուներով տասնյակ գրքեր, միջազգային բոլոր ասյաններին ներկայացրել ամենատարբեր փաստաթղթեր, տեսաֆիլմեր: Սովորաբար Ադրբեջանի քարոզչությունը իր նպատակին հասնելու համար ամեն մի միջոց և հնարավորություն օգտագործում է: Հիշենք օրինակ բարկացի հայազգի լրագրող Ռ. Առաքելովի «Լեռնային Ղարաբաղ. մեղավորները հայտնի են» գիրքը, որը հարյուր հազար տպաքանակով 1991 թ. ռուսերեն լույս ընծայեց Բաքվի «Շարգաբ» հրատարակչությունը, տարածելով ԱՊՀ երկրներում: Գրքի հեղինակը Բաքվում պատանդ պահված իր ընտանիքի անդամներին ազատելու համար ստիպված էր եղել ընդունել ադրբեջանական քարոզչության դեկավարների առաջարկությունը, մեկնել էր Ստեփանակերտ և Երևան, հանդիպումների արդյունքում գրել այդ հակահայկական գիրքը: Ադրբեջանի քարոզչությունը արդարախոս ու մարդու իրավունքները պաշտպանող լրագրողների, հասարակական գործիչների դեմ պայքարի միջոց է դարձնում զրպարտությունը, սադրանքը, բացարձակ սուտ ու հալածանքները: Նման հալածանքների են ենթարկվել բելոռուս Յակովենկոն, ռուս գրող-հրապարակախոսներ Նույկինը, Օսկոցկին, Դայդարը, Բորովիկը, հասարակական ակտիվ գործիչներ Սախարովը, Բոնները, Սատարովոյտովան, բարոնուհի Քոկսը, տասնյակ ճշմարտախոս լրագրողներ: Մշտապես Ադրբեջանի քարոզչության թիրախում են գտնվում հայ գրողներն ու հասարակական գործիչները: Մի խումբ լեզգի հայրենասերների դատավարությունը, ընթացքում Բաքվի իշխանությունները ու քարոզչությունը փորձել են ամեն ինչ բարդել Հայաստանի Հանրապետության վրա, մոռացության մատնելով այն հանգամանքը, որ Բաքուն ու ոչ թե Երևանն է ճնշում ազգային փոքրամասնություններին լեզգի, ավար, թալիշ, քուրդ, ուտի եր մյուս ժողովուրդներին, ոչնչացնում նրանց արժանապատվությունն ու իրավունքները: Եթե ռազմի դաշտում վաղուց լռել են հրանոթները ու ավտոմատները, ապա փաստորեն Ադրբեջանը շարունակում է Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության դեմ քարոզչական պատերազմը, որի դեմ պայքարի միջոցը ամենևին էլ քար լռությունը չէ:

Հայաստանում մինչև անկախության հռչակումը քարոզչությունը իրականացնում էին որոշ նվիրյալ անհատներ ու հասարակական կազմակերպություններ: Արտաքին հասարակական կարծիքի վրա ներազդման յուրօրինակ աշխատանք էր ծավալել նաև «Ավեստա» ասոցիացիան, որն ընդգրկում էր գրողների, լրագրողների, նկարիչների ու երաժիշտների: Այդ տարիներին Ադրբեջանի քարոզչությունը զգալի զիջում էր մեր քարոզչությանը: Սակայն անկախ պետականության ստեղծումով դադարեց հասարակական կազմակերպությունների գործունեությունը, չնայած պետական ու ազգային շահերը պահանջում էին, որ այս պրոցեսը զուգորդվեին թե պետական և թե հասարակական կազմակերպությունների ջանքերը, որի շնորհիվ քարոզչությունը շատ ավելի արդյունավետ կլիներ: Իսկ ահա պետական այն կազմակերպությունները, որոնք կոչված էին իրականացնելու պետական ու ազգային խնդիրների, ճշմարտության և արդարության քարոզչությունը, կարելի է ասել, չէին գործում: Օրինակ, տեղեկատվության նախարարությունը, ունենալով հրատարակչական հզոր մեխանիզմ, փաստորեն օտար լեզուներով ոչ մի գիրք, չի տպագրել: Բերեմ մեկ օրինակ: Ադրբեջանական քարոզչությունն աշխարհով մեկ թափանցում է իր պահանջատիրությունը Շուշի քաղաքների նկատմամբ: Տողերիս հեղինակը նախարարությանը առաջարկեց Շուշիի համառոտ պատմությունը: Տասնյակ միջնադարյան վավերագրեր աղացուցում են, որ Շուշին հազարամյակներ շարունակ հայկական մշակութային օջախներից էր: Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, արաբերեն ու պարսկերեն հիսուն էջանոց գրքույկները կարող էին լուրջ դեր խաղալ Բաքվի իշխանությունների ախտրժակը փակելու խնդրում:

Ցանկացած խնդիր միջազգային ասյաններում, այլ կազմակերպությունների ու պետությունների հետ լուծելու համար այդ երկրում նախ պիտի հասարակական կարծիք ստեղծել այդ հարցի շուրջ, որը նախնական հող կդյուրացնի խնդրի լուծման հաջող ընթացքի համար: Ակտիվ՝ ու ճկուն քարոզչությամբ կարելի է կանխել ավելի պատերազմները, պատերազմի դեպքում հասնել հաջողության: Իսկ քարոզչության բացակայության կամ պասիվության դեպքում կարող ես կորցնել նույնիսկ ռազմի դաշտում նվաճած դիրքերը: Փաստորեն քարոզչությունն ու տեղեկատվությունը պետական ու ազգային ռազմավարության կարևորագույն բաղադրիչներից են:

Մեր հանրապետությունում քարոզչական մեխանիզմի չաշխատելը որևէ կապում են իշխանությունների վարած կադրային քաղաքականության մեջ եղած թերությունների հետ: Յուրաքանչյուր վերադաս, ասում են նրանք, սովորաբար ձգտում է ստորադաս օղակներում նշանակել իրեն հավատարմություն ցույց տվող մարդկանց: Այս դեպքում ազգակցական-խնամիական կապերից բացի առավելություն են ստանում նաև շողոքորքերը: Այս ամենը բերում է նրան, որ արհամարհվում են գործի մասնագետները, ու հարուստ փորձ ունեցողները: Ուրեմն հինգ տարի է, ինչ հանրապետությունում զգացել է տալիս պետական քարոզչության աննեղելի դասիվությունը: Այդ ընթացքում չի հաջողվել ստեղծել արտաքին հասարակական կարծիքի վրա ներազդման որևէ լուրջ համակարգ, չնայած այդ նպատակով հիմնվել էր (ավելի շատ փորձ էր արվել) տեղեկատվության նախարարություն մեծաքանակ աղարտով ու բավականին հզոր միջոցներով (հրատարակչություններ, տպարաններ, հեռուստատեսություն, ռադիո, լրատվական գործակալություն, մամուլ...):

Դիարկե, քարոզչության հետ է կապված նաև հասարակության ներսում արդարության, բարոյականության, եկամուտների արդարացի բաշխման խնդիրները: Քարոզչության կազմակերպմանը ինչ բանով չեն խանգարում նաև մամուլի, տեղեկատվության մասին օրենքի կենսագործման ճանապարհին գոյություն ունեցող խոչընդոտները: Վերջապես, քարոզչության հիմքը երկրի տնտեսական ու ֆինանսական հզորությունն է: Սակայն հենց տեղեկատվության հոսքը կխթանի երկրի տնտեսական վերելքը: Առանց տեղեկատվության ցանկացած երկիր նման է կույր մարդու: Սակայն տեղեկատվության նախարարությունում հենց տեղեկատվությունը լիովին անտեսված է: Երևանում այժմ կան հասարակական կազմակերպություններ, որոնք այս ասպարեզում անհամեմատ շատ ավելի մեծ ծավալի աշխատանք են կատարում, քան հսկա նախարարությունն էր: Պետական այս մարմինը այժմ կառավարության որոշմամբ կազմալուծված է: Ուրեմն, հասկացել են (վերջապես), որ այս քարոզչական մեքենան չի աշխատել: Նրանք պետք է առաջին հերթին որոնեն և տեսնեն այն մարդկանց, որոնք կարող են կազմակերպել այս պատասխանատու գործը: Ցանկալի է, որ պետական օղակներին զուգահեռ ստեղծվեն քարոզչության մեջ տարբեր ֆունկցիաներ կատարող հասարակական հիմունքներով գործող ճկուն մեխանիզմներ, որոնք կաղապարի խնդիրներում առավելություններ ունեն պետականի նկատմամբ: Անշուշտ, միանգամից տեղեկատվական հսկա մեխանիզմ աշխատեցնելը տնտեսապես բույլ հանրապետությունում դժվար է: Թերևս իմաստ ունի փիլիսոֆայավալ, սակայն ճկուն, խիստ մասնագիտացված օղակների ստեղծումը:

ԲԱԿՈՒԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Այս բացը առավել զգալի դարձավ ԵԱՀԿ-ի լիսաբոնյան գագաթաժողովում, երբ պարզ դարձավ, որ եվրոպական երկրների մեծամասնությունը, մերժելով Ղարաբաղի հայության ինքնորոշման իրավունքը, գերադասությունը տալիս է Ադրբեջանի Հանրապետության ամբողջականության պահպանմանը: Հենց Լիսաբոնում առավել ցայտուն երևացին քարոզչության ասպարեզում Ադրբեջանի և Թուրքիայի միասնական ակտիվ ու մեծածավալ աշխատանքն ու դրա պտուղները: Վերջին տարիներին նրանք լրատվական միջազգային տուկան լցրել են անգլերեն ու այլ լեզուներով տասնյակ գրքեր, միջազգային բոլոր ասյաններին ներկայացրել ամենատարբեր փաստաթղթեր, տեսաֆիլմեր: Սովորաբար Ադրբեջանի քարոզչությունը իր նպատակին հասնելու համար ամեն մի միջոց և հնարավորություն օգտագործում է: Հիշենք օրինակ բարկացի հայազգի լրագրող Ռ. Առաքելովի «Լեռնային Ղարաբաղ. մեղավորները հայտնի են» գիրքը, որը հարյուր հազար տպաքանակով 1991 թ. ռուսերեն լույս ընծայեց Բաքվի «Շարգաբ» հրատարակչությունը, տարածելով ԱՊՀ երկրներում: Գրքի հեղինակը Բաքվում պատանդ պահված իր ընտանիքի անդամներին ազատելու համար ստիպված էր եղել ընդունել ադրբեջանական քարոզչության դեկավարների առաջարկությունը, մեկնել էր Ստեփանակերտ և Երևան, հանդիպումների արդյունքում գրել այդ հակահայկական գիրքը: Ադրբեջանի քարոզչությունը արդարախոս ու մարդու իրավունքները պաշտպանող լրագրողների, հասարակական գործիչների դեմ պայքարի միջոց է դարձնում զրպարտությունը, սադրանքը, բացարձակ սուտ ու հալածանքները: Նման հալածանքների են ենթարկվել բելոռուս Յակովենկոն, ռուս գրող-հրապարակախոսներ Նույկինը, Օսկոցկին, Դայդարը, Բորովիկը, հասարակական ակտիվ գործիչներ Սախարովը, Բոնները, Սատարովոյտովան, բարոնուհի Քոկսը, տասնյակ ճշմարտախոս լրագրողներ: Մշտապես Ադրբեջանի քարոզչության թիրախում են գտնվում հայ գրողներն ու հասարակական գործիչները: Մի խումբ լեզգի հայրենասերների դատավարությունը, ընթացքում Բաքվի իշխանությունները ու քարոզչությունը փորձել են ամեն ինչ բարդել Հայաստանի Հանրապետության վրա, մոռացության մատնելով այն հանգամանքը, որ Բաքուն ու ոչ թե Երևանն է ճնշում ազգային փոքրամասնություններին լեզգի, ավար, թալիշ, քուրդ, ուտի եր մյուս ժողովուրդներին, ոչնչացնում նրանց արժանապատվությունն ու իրավունքները: Եթե ռազմի դաշտում վաղուց լռել են հրանոթները ու ավտոմատները, ապա փաստորեն Ադրբեջանը շարունակում է Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության դեմ քարոզչական պատերազմը, որի դեմ պայքարի միջոցը ամենևին էլ քար լռությունը չէ:

Հայաստանում մինչև անկախության հռչակումը քարոզչությունը իրականացնում էին որոշ նվիրյալ անհատներ ու հասարակական կազմակերպություններ: Արտաքին հասարակական կարծիքի վրա ներազդման յուրօրինակ աշխատանք էր ծավալել նաև «Ավեստա» ասոցիացիան, որն ընդգրկում էր գրողների, լրագրողների, նկարիչների ու երաժիշտների: Այդ տարիներին Ադրբեջանի քարոզչությունը զգալի զիջում էր մեր քարոզչությանը: Սակայն անկախ պետականության ստեղծումով դադարեց հասարակական կազմակերպությունների գործունեությունը, չնայած պետական ու ազգային շահերը պահանջում էին, որ այս պրոցեսը զուգորդվեին թե պետական և թե հասարակական կազմակերպությունների ջանքերը, որի շնորհիվ քարոզչությունը շատ ավելի արդյունավետ կլիներ: Իսկ ահա պետական այն կազմակերպությունները, որոնք կոչված էին իրականացնելու պետական ու ազգային խնդիրների, ճշմարտության և արդարության քարոզչությունը, կարելի է ասել, չէին գործում: Օրինակ, տեղեկատվության նախարարությունը, ունենալով հրատարակչական հզոր մեխանիզմ, փաստորեն օտար լեզուներով ոչ մի գիրք, չի տպագրել: Բերեմ մեկ օրինակ: Ադրբեջանական քարոզչությունն աշխարհով մեկ թափանցում է իր պահանջատիրությունը Շուշի քաղաքների նկատմամբ: Տողերիս հեղինակը նախարարությանը առաջարկեց Շուշիի համառոտ պատմությունը: Տասնյակ միջնադարյան վավերագրեր աղացուցում են, որ Շուշին հազարամյակներ շարունակ հայկական մշակութային օջախներից էր: Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, արաբերեն ու պարսկերեն հիսուն էջանոց գրքույկները կարող էին լուրջ դեր խաղալ Բաքվի իշխանությունների ախտրժակը փակելու խնդրում:

Ցանկացած խնդիր միջազգային ասյաններում, այլ կազմակերպությունների ու պետությունների հետ լուծելու համար այդ երկրում նախ պիտի հասարակական կարծիք ստեղծել այդ հարցի շուրջ, որը նախնական հող կդյուրացնի խնդրի լուծման հաջող ընթացքի համար: Ակտիվ՝ ու ճկուն քարոզչությամբ կարելի է կանխել ավելի պատերազմները, պատերազմի դեպքում հասնել հաջողության: Իսկ քարոզչության բացակայության կամ պասիվության դեպքում կարող ես կորցնել նույնիսկ ռազմի դաշտում նվաճած դիրքերը: Փաստորեն քարոզչությունն ու տեղեկատվությունը պետական ու ազգային ռազմավարության կարևորագույն բաղադրիչներից են:

Մեր հանրապետությունում քարոզչական մեխանիզմի չաշխատելը որևէ կապում են իշխանությունների վարած կադրային քաղաքականության մեջ եղած թերությունների հետ: Յուրաքանչյուր վերադաս, ասում են նրանք, սովորաբար ձգտում է ստորադաս օղակներում նշանակել իրեն հավատարմություն ցույց տվող մարդկանց: Այս դեպքում ազգակցական-խնամիական կապերից բացի առավելություն են ստանում նաև շողոքորքերը: Այս ամենը բերում է նրան, որ արհամարհվում են գործի մասնագետները, ու հարուստ փորձ ունեցողները: Ուր ներից հետո, ասես մեղա գալով, մի հոդվածում խոստովանում է, որ ինքը ընտրարշավի ընթացքում չի կարողացել պատշաճ ձևով կազմակերպել նախագահի օգտին քարոզչությունը: Իսկ իրեն վստահված նախարարությունը ճիշտ և նպատակասլաց աշխատեցնելու դեպքում նա իր հովանավոր նախագահին շատ ավելի մեծ ծառայություն արած կլիներ: Ի վերջո, ողջ համակարգը տեղադրույթ էր տալիս, քանի որ մեխանիզմի մեջ «ատամնանիվները» (կադրերը) ոչ «շառավղով», ոչ էլ «ատամների չափերով» իրար չէին համապատասխանում: Հետաքրքիր է, որ իշխանությունները շատ մեծ ուշացումով գլխի ընկան, որ նախարարությունը չի աշխատում, որ նախարար-նախարար են խաղում վարչապետ Բագրատյանի հետ:

Չոգետ է մոռացության մատնել պետական ու ազգային կարևոր խնդիրների շուրջ ներքին հասարակական կարծիքի վրա ներազդման գործը, այլ խոսքով՝ ներքին քարոզչությունը: Այստեղ ևս շոշափելի են բացթողումները: Ահա այսօր հանրապետության հասարակության ամենատարբեր շերտերում տարածվում է այն կարծիքը, թե իշխանությունները պատրաստվում են զիջելու Լեռնային Ղարաբաղը: Հիշենք, որ 1992 թ. ամռանը Մարտակերտի երջանիկ քարոզչությունը զգալի զիջում էր մեր քարոզչությանը: Սակայն անկախ պետականության ստեղծումով դադարեց հասարակական կազմակերպությունների գործունեությունը, չնայած պետական ու ազգային շահերը պահանջում էին, որ այս պրոցեսը զուգորդվեին թե պետական և թե հասարակական կազմակերպությունների ջանքերը, որի շնորհիվ քարոզչությունը շատ ավելի արդյունավետ կլիներ: Իսկ ահա պետական այն կազմակերպությունները, որոնք կոչված էին իրականացնելու պետական ու ազգային խնդիրների, ճշմարտության և արդարության քարոզչությունը, կարելի է ասել, չէին գործում: Օրինակ, տեղեկատվության նախարարությունը, ունենալով հրատարակչական հզոր մեխանիզմ, փաստորեն օտար լեզուներով ոչ մի գիրք, չի տպագրել: Բերեմ մեկ օրինակ: Ադրբեջանական քարոզչությունն աշխարհով մեկ թափանցում է իր պահանջատիրությունը Շուշի քաղաքների նկատմամբ: Տողերիս հեղինակը նախարարությանը առաջարկեց Շուշիի համառոտ պատմությունը: Տասնյակ միջնադարյան վավերագրեր աղացուցում են, որ Շուշին հազարամյակներ շարունակ հայկական մշակութային օջախներից էր: Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, արաբերեն ու պարսկերեն հիսուն էջանոց գրքույկները կարող էին լուրջ դեր խաղալ Բաքվի իշխանությունների ախտրժակը փակելու խնդրում:

Ցանկացած խնդիր միջազգային ասյաններում, այլ կազմակերպությունների ու պետությունների հետ լուծելու համար այդ երկրում նախ պիտի հասարակական կարծիք ստեղծել այդ հարցի շուրջ, որը նախնական հող կդյուրացնի խնդրի լուծման հաջող ընթացքի համար: Ակտիվ՝ ու ճկուն քարոզչությամբ կարելի է կանխել ավելի պատերազմները, պատերազմի դեպքում հասնել հաջողության: Իսկ քարոզչության բացակայության կամ պասիվության դեպքում կարող ես կորցնել նույնիսկ ռազմի դաշտում նվաճած դիրքերը: Փաստորեն քարոզչությունն ու տեղեկատվությունը պետական ու ազգային ռազմավարության կարևորագույն բաղադրիչներից են:

Մեր հանրապետությունում քարոզչական մեխանիզմի չաշխատելը որևէ կապում են իշխանությունների վարած կադրային քաղաքականության մեջ եղած թերությունների հետ: Յուրաքանչյուր վերադաս, ասում են նրանք, սովորաբար ձգտում է ստորադաս օղակներում նշանակել իրեն հավատարմություն ցույց տվող մարդկանց: Այս դեպքում ազգակցական-խնամիական կապերից բացի առավելություն են ստանում նաև շողոքորքերը: Այս ամենը բերում է նրան, որ արհամարհվում են գործի մասնագետները, ու հարուստ փորձ ունեցողները: Ուր

Կալիֆոռնիայում հրատարակվում է «Ազարբեյջան ինթերնեշընալ» եռամսյա հանդեսը: Մեծամասամբ անգլերեն շրջ մի հրատարակություն, որ թեև իրեն կոչում է «անկախ հրատարակություն», սակայն առաջին իսկ հայացքից պարզվում է, որ այն հետապնդում է 2 գլխավոր նպատակ՝ ադրբեջանական ինֆնագովերգում և հակահայ քարոզչություն: Այսինքն՝ խիստ նպատակաուղղված պետական պրոպագանդա: Իսկապես տպավորիչ է հանդեսի մատուցման ոճակը՝ միջազգային մակարդակի ձևավորում, բազմագույն, առատ լուսանկարներ, տպագրական այլ էֆեկտներ, կարճ հոդվածներ և լուրեր, ամերիկյան լրագրական լեզու և լեզվամտածողություն: Տպավորիչ է նաև հանդեսը իրենց գեղեցիկ գովազդներով հովանավորող միջազգային հզոր կազմակերպությունների ցուցակը՝ AMOCO, AIOC, CONOCO, BRITISH PETROLIUM, STATOIL, BRITISH AIRWAYS, PENNZOIL, OHL, LUFTHANSA, MOBIL, EXON և այլն:

Բարեպատեհաբար տկար է բովանդակությունը, պարզունակ և մերկաղարանոց: Թերթելով հանդեսի 1996 տարեշրջանի 3 համարները, առաջին մտածումը հետևյալն է լինում՝ իսկ մենք չէի՞նք կարող նման հրատարակություն ունենալ, արտասահմանում, ավելի՝ բովանդակալից և առավել կարևորը՝ արդար և արդարամիտ: Իսկ ո՞վ պիտի ձեռնարկեր այդ գործը, եթե ոչ՝ ՀՀ տեղեկատվության նախարարությունը, կամ նման մի գերատեսչություն: Իսկ միջոցնե՞րը, չէ՞ որ մենք չենք կարող վայելել միջազգային նավթային այդ կարտելի հովանավորությունը, - կարող են հարց տալ: Այո, բայց մենք էլ ունենք այն, ինչը չունեն ադրբեջանցիները՝ սփյուռքի կարողությունները: Միայն անբահախնդիր և նվիրաբերողներին հարգող վերաբերմունք, գործի կազմակերպում է պետք:

Դարձյալ Կալիֆոռնիայում, անցյալ աշնանը ադրբեջանցիները հրատարակեցին շեղ ալբոմ (տեսնել կողքի լուսանկարը), որը կրում է Land of Fire («Կրակի երկիր») երկրիմի վերնագիրը:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

# Միջազգային

# «Կյանքում ամեն ինչ բախտի եւ ժամանակի ճիշտ ընտրության խնդիր է»

***Առում էր Ֆրանսիայում ԱՄՆ դեսպան ՊԱՄԵԼԱ ՀԱՐԻՄԱՆԸ, որի մահվան գույժն արդեն հրապարակել ենք մեր թերթում. «Նա արտակարգ դեսպան էր. Իմ հանդիպած մարդկանցից ամենաանսովորներից ու ամենաբնորհալիներից էր», այսպես է բնութագրել ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնը Պամելա Հարիմանին, լսելով նրա մահվան գույժը. Բարձր հասարակության ոլորտներում փոթորկալից կյանք ապրած եւ որոշ ժամանակներում «վերջին կուրտիզանուհի» հորջորջված «մեծ լեդիի» մասին ընդարձակ հոդված է տպագրել «Ինքերնեթընթլ հերալդ տրիբյուն» թերթը, որից հատվածներ ենք ներկայացնում.***

Սովենսոր Չերչիլը, որը պատերազմի ժամանակ հայտնի վարչապետի թոռն է:

Տիկին Հարիմանը, որը Ֆրանսիայում ԱՄՆ-ի դեսպան էր նշանակվել 1993 թվականի մարտին, նախկինում առանձնապես չէր բողոքել հիվանդություններից: Նրա հավասարակշռված կեցվածքը, պատրաստի ժպիտը եւ պայծառ հայացքը, որոնք տարիներ շարունակ գրավել էին շատերին, անխաբար էին մնացել մինչեւ վերջ:

Պամելան ծնվել էր Անգլիայում 1920 թվին, նախկին արիստոկրատների ընտանիքում: Դուստրն էր 11-րդ բարոն Դիգբիի: Բարձր հասարակություն իր ճանապարհը նա հարթել է ինքնուրույն, նվաճելով ամենահարուստ եւ ամենազեղեցիկ տղամարդկանց սրտերը եւ առաջացնելով նրանց կանանց զայրույթը:

Շնայած 80-ական թվերին նա ամբողջովին նվիրվել էր Ամերիկայի դեմոկրատական կուսակցության արհեստական վերակառուցմանը եւ վերջին տարիներին Ֆրանսիայում դեսպանատան բարդ ափսառանիին, այդուամենայնիվ, տիկին Հարիմանը չէր կորցրել իր լեգենդար համբավը որպես մեր դարի մեծագույն կուրտիզանուհիներից եւ արեւմտյան ափսառում ամենաշատ խոսելու առիթ տված կանանցից մեկը:

Ամուսնացած է եղել երեք անգամ: Առաջինը Բրիտանիայի վարչապետ Ուինսթոն Չերչիլի որդու՝ Ռանդոլֆի հետ 1939 թվին, երբ ընդամենը 19 տարեկան էր: Մի քանի ամիս անց, Ռանդոլֆը մեկնում է բանակ, եւ Պամելան պատերազմյան ժամանակի Լոնդոնում միայնակ մնալով, դառնում է վարչապետի մտերիմ անձանցից մեկը: Նրա միջոցով ծանոթանում է Մաքս Բիվերբրուքի, որը դառնում է նրա «ուսուցիչ ու դաստիարակը», Հարի Հոփքինսի, Ֆրանկլին Ռուզվելտի բանագնացի եւ Ավերել Հարիմանի հետ, որը սիրեկան լինելուց 30 տարի անց դառնում է նրա ամուսինը:

Հետպատերազմյան ժամանակն ամենալավ ժամանակն է եղել Պամելայի համար: Ռանդոլֆից ամուսնալուծվելուց հետո, Հարիմանի հոգատարության ներքո, արդեն որդու տեր Պամելան Լոնդոնի ամենահարուստ բաղադատներից Գրովներ Սքվերում ռեզիդենցիա է գնում, որտեղ բարձրատիճան եւ հեղինակավոր ամերիկացիների եւ անգլիացիների պատվին տրված հավաքույթներն անդադար են եղել: Դրանց ընթացքում էլ սիրային կապեր են հաստատվել հաճախ ամուսնացած տղամարդկանց հետ: Նրանցից ամենանշանավորներից են Ջոն Հեյ Ուիթնին, որը հետագայում դառնում է դեսպան, եւ Էդուարդ Մարրոուն, որը որպես CBS-ի հաղորդավար հնչեցնում էր Լոնդոնի ձայնը Ամերիկայում:

Այնուհետեւ Պամելան հաստատվում է Փարիզում, որտեղ Չերչիլ անվան եւ իր անձնական ճարտարամտության շնորհիվ կարողանում է մուտք գործել միջազգային շրջանակներ: Այդ շրջանի նրա սիրային կապերի «թիրախներ» են դառնում, ուրիշների թվում, Ջիանի Ագնելլին՝ իտալական «Ֆիատ» ավտոմոբիլաշինի ժառանգորդը (որի պատճառով Պամելան դառնում է կաթոլիկ), բարոն Էլի դը Ռոթշիլդը՝ ֆրանսիական բանկային «ընտանիքից», եւ արեւելյան Ալի խանը՝ հայտնի Աղա խանի որդին: Այդ կապերից յուրաքանչյուրը տեւում է մոտ հինգ տարի: Այնուհետեւ տեղափոխվում է Ամերիկա, որտեղ 1960-ին երկրորդ անգամ է ամուսնանում: Նրա ամուսինն է դառնում Բրոդվեյի պրոդյուսերներից Լելանդ Հեյուորդը, որը հայտնի է իր «Հարավային խաղաղականը» եւ «Երաժշտության հնչյունները» շատ սիրված ներկայացումներով:

Վերջինիս մահից հետո (1971) հորիզոնում դարձյալ հայտնվում է հարուստ դիվանագետ Ավերել Հարիմանը: Այս անգամ կարծ սիրավեպից հետո նրանք ամուսնանում են, եւ Պամելան դառնում է ԱՄՆ-ի խաղաթղթի: Այդ ժամանակ նա 51 տարեկան էր, իսկ Հարիմանը՝ 79: Վերջինս պրում է մինչեւ 94 տարեկանը եւ 1986-ին վախճանվում՝ Պամելային թողնելով կալվածքների եւ ունեցվածքների թվում նաեւ ավելի քան հարյուր միլիոն դոլար:

Պամելան սիրուն է եղել, բայց ոչ գեղեցիկ: Երիտասարդ տարիներին կարճահասակ եւ գիրուկ: Բայց մարդկանց գերելու բացառիկ շնորհք է ունեցել: Նրա կենսագիրներից Քրիստոֆեր Օգդենն այսպես է ներկայացրել նրան. «1992-ի նոյեմբերին նորընտիր նախագահ Քլինթոնի ճաշկերույթին նա պարզապես առասպելական տեսք ուներ: 72 տարեկանում նա ընդամենը 50-ը հազիվ անց էր երեւում եւ 40 տարեկանի ոգեւորություն ուներ: Կեցվածքն արքայական էր»:

Իսկ 1996-ին տեղի ունեցած խոսակցության ժամանակ Պամելան ինքն իր մասին այսպես է արտահայտվել. «Կյանքը հոսել է անկախ ինձանից: Երբեք չեմ մտածել, թե ինչ է կարգավորեմ այն: Կյանքն ընդունել եմ այնպես, ինչպես այն ինձ ներկայացել է: Կարծում եմ, կյանքում ամեն ինչ բախտի եւ ժամանակի ճիշտ ընտրության խնդիր է»:

1970-ական թվերին որպես տիկին Հարիման, նա ճաշկերույթներ է տվել դեմոկրատական կուսակցության համար նյութական միջոցներ հանգանակելու նպատակով: Բայց 80-ական թվերին հանրապետականների հաղթանակն էր, որ նրան ամբողջովին ներգրավում են դեմոկրատական կուսակցությունը վերակառուցելու ափսառանքներում: 1992-ին Քլինթոն-Գոր նախագահական ընտրարշավի կազմակերպման համանախագահ է եղել եւ իր ծառայություններին դիմաց նշանակվել դեսպան Ֆրանսիայում: Պամելան մտադիր էր այս տարվա սկզբներին վերադառնալ Ամերիկա, բայց Քլինթոնի վարչակարգը խնդրեց նրան շարունակել իր ափսառանքը մինչեւ հարմար փոխարինող գտնեն:

Այժմ նրա պատճառի թեկնածուների թվում նշվում են Հնդկաստանում ԱՄՆ-ի դեսպան Ֆրենկ Ուիսները եւ Նյույորքյան բանկիր Ֆելիքս Ռոհատին:

ԱՄՆ

## Քլինթոնը եւ Կոնգրեսի ղեկավարները որոշում են համագործակցել

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ՓԱՍՏ. Միջկուսակցական ընտրական պայքարների շրջանը ետեւում թողնելով, նախագահ Բիլ Քլինթոնը եւ Կոնգրեսի հանրապետական ղեկավարները խոստացան իրենց ուշադրությունը կենտրոնացնել այն կետերի վրա, որոնց շուրջ համաձայն են, որպեսզի հնարավոր դառնա համագործակցությունը:

Համագործակցության հազվագյուտ մթնոլորտում գումարված ժողովից հետո նախագահ Քլինթոնն իր կողքին ունենալով Սենատի հանրապետական մեծամասնության ղեկավար Թրենթ Լաթին եւ Ներկայացուցիչների տան հանրապետական խոսնակ Նյուտ Գինգրիչին, հայտարարեց, թե հանդիպումը «շատ կարեւոր առաջին քայլ էր» բյուջեն հավասարակշռելու, կրթական մարզը բարելավելու եւ մի շարք այլ հարցերի շուրջ համաձայնություններ գոյացնելու ճանապարհին:

Լաթը եւ Գինգրիչը, որոնք բյուջեն հավասարակշռելու հարցով վերջին երկու տարիներին հաճախ բախումներ են ունեցել նախագահի հետ, նույնպես «շատ դրական» համարեցին հանդիպումը:

Կոնգրեսի շենքում տեղի ունեցած հանդիպմանը մասնակցեցին նաեւ փոխնախագահ Ալ Գորը, Ներկայացուցիչների տան դեմոկրատ փոքրամասնության ղեկավար Ռիչարդ Կեփհարթը եւ Սենատի դեմոկրատ փոքրամասնության ղեկավար Թոմ Դեշլը:

## Մադլեն Օլբրայթը խուսափողական պատասխաններ է տալիս

Թուրքական հեռուստատեսության հաղորդման համաձայն, ԱՄՆ-ի պետքարտուղար Մադլեն Օլբրայթը, Կոնգրեսում խոսելով առաջիկա 4 տարիներին երկրի արտաքին քաղաքականության բնագավառում նախատեսվող միջոցառումների մասին, անդրադարձավ նաեւ թուրքհունական հարաբերություններին եւ Կիպրոսի խնդրին: Օլբրայթը հայտարարեց, որ Կիպրոսի խնդիրը Եվրոպայի անվտանգության եւ ԱՄՆ-ի շահերի առումով զգալի վտանգ է ներկայացնում: Օլբրայթը մասնավորապես ասաց. «Թուրքիայի-ուղիղ ափսառանքի երկրի գոյությունն մեզ համար մեծ նշանակություն ունի: Էգեյան ծովի ավազանում Թուրքիայի եւ Հունաստանի միջեւ գոյություն ունեցող լարվածությունը մեղմելու, Կիպրոսի խնդրի ու Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման ուղղությամբ ԱՄՆ-ը կշարունակի ակտիվություն ցուցաբերել»: Կոնգրեսի անդամներից մեկի՝ Թուրքիայում ափսառանքի համակարգի նկատմամբ առկա վտանգի եւ Թուրքիայի կողմից Հայաստանը շրջափակելու վերաբերյալ արած արտահայտությանը Օլբրայթը տվեց հետեւյալ պատասխանը. «Թուրքիայի ափսառանքի բնույթը շատ կարեւոր հանգամանք է: Իսկ-ինչ վերաբերում է Ղարաբաղի խնդրին, ապա այն մեր դաշնակից Թուրքիայի եւ ընդհանրապես ՆԱՏՕ-ի ռազմավարական ոլորտների իրագործման առումով զգալի ազդեցություն կարող է ունենալ»:

ՀԱՄԱՌՈՏ

## Ասլան Մասխադովը կհամատեղի նախագահի եւ կառավարության ղեկավարի պաշտոնները

ԳՐՈԶՆԻ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Պաշտոնն ստանձնած Չեչնիայի նոր նախագահ Ասլան Մասխադովը միաժամանակ կգլխավորի նաեւ հանրապետության կառավարությունը: Այս մասին հայտնել է Չեչնիայի նախագահի երջապատից իրազեկ մի աղբյուր: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման համաձայն, Ասլան Մասխադովը մտադիր է գործել Չեչնիայի Հանրապետության սահմանադրության շրջանակներում, որը չի արգելում այս պաշտոնների համատեղումը: Չեչնիայում նախարարների նոր կաբինետ կազմելու վերաբերյալ որեւէ այլ կոնկրետ որոշում առայժմ չի կայացվել: Ենթադրվում է, որ նախագահի պաշտոնում իր ձեռնարկելիք առաջին քայլերի մասին Ասլան Մասխադովն ինքը կհայտնի ծրագրային մամլո ասուլիսի ժամանակ:

## Բուլղարիայի նոր կառավարությունը անցել է ափսառանքի

ՍՈՖԻԱ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ՆՏ. Բուլղարիայում փետրվարի 12-ին նոր կառավարություն կազմելու մանդատ է ստացել Ստեֆան Սոֆիանսկին: Կառավարության առաջին նիստում որոշվել է ստեղծել ֆինանսական կայունացման հարցերով խորհուրդ՝ Ս. Սոֆիանսկու ղեկավարությամբ: Վերջինս շեշտել է, թե անհրաժեշտ է հաշվի առնել երկրի ֆինանսական հնարավորությունները եւ ընդունել այնպիսի որոշումներ, որոնք կարելի է իրականացնել: Խորհուրդը բանակցություններ է վարելու միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ: Նոր ծառայողական մնաշորդին հանձնելով գործերը, նախկին վարչապետ Ժան Վիդենովը ասել է, թե սոցիալիստական կաբինետի ափսառանքում ավելի շատ հիասթափություն է եղել եւ հազվադեպ ուրախություն եւ հուսադրում: Վիդենովը Սոֆիանսկու կառավարության առաքելությունը բնութագրել է իբրեւ «հատկապես դժվար»:

## Աֆրիկայի ավտոճանապարհներին տարեկան 50 հազար մարդ է զոհվում

Աֆրիկայում ավտոճանապարհները դառնում են բազում մարդկանց մահվան պատճառ. տարեկան 50 հազար մարդ է զոհվում, որը 10 հազարով ավելի է, քան Միացյալ Նահանգներում, որ երթեւեկությունը տասնյոթ անգամ ավելի խիտ է... Քենիան, օրինակ, պահում է տխրահռչակ ռեկորդը. 7,7 մահվան դեպք հազար մեքենայի դիմաց, քանի որ այդ երկրի քաղաքացիներն ավելի վատ վարորդներ են, քան այլոք, իսկ վիճակագրությունն ընդհանրապես ավելի ճշգրիտ: Աֆրիկյան ավտոխճուղիների եւ ավտոմոբիլային հավաքակայանի վատ վիճակը ավելի հաճախակի է մահվան դեպքերի պատճառ դառնում:

ԻԶՎԵՍՏԻԱ

## Արեւելյան Սլավոնիայում 90, թե՞ 150 հազար սերբ է բնակվում

12 ՓԵՏՐՎԱՐ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ», DW: Խորվաթիայում ապրիլի 13-ին անց են կացվում քաղաքային ընտրություններ: Ընտրություններ են անցկացվելու նաեւ ներկայումս Խորվաթիայի սերբերի վերահսկողության տակ գտնվող Արեւելյան Սլավոնիայում: Խորվաթիայի նախագահ Թուջմանն այս մասին որոշում կայացրեց, երբ Արեւելյան Սլավոնիայում գտնվող ՄԱԿ-ի ներկայացուցիչները խնդրեցին հավելյալ ժամանակ՝ տեղի սերբ բնակչների անունները գրանցելու խնդիրը լուծելու համար: Մինչեւ այժմ դեռեւս որոշված չէ այս տարածքի սերբ ազգաբնակչության ճշգրիտ թիվը: Մինչ Խորվաթիայի կառավարությունը պնդում է, թե Արեւելյան Սլավոնիայում 90 հազար սերբ է բնակվում, ՄԱԿ-ը այդ թիվը գնահատում է 150 հազար: Այս տարածքն ընտրությունների արդյունքում հավանաբար նորից անցնի Խորվաթիայի վերահսկողության ներքո: Շեշտենք, որ հուլիսի 15-ից ՄԱԿ-ի զորքերը դուրս են բերվելու այս տարածքից:

## «Ժոզի» ցիկլոն. 34 զոհ եւ 500 անհետ կորած

ՆԱՅՐՈԲԻ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մադագասկարի վրա մոլեգնած «Ժոզի» ցիկլոնի հետեւանքով զոհվել է 34 եւ անհայտ կորել 500 մարդ: Ինչպես հաղորդել է մալագասյան ռադիոն, փոթորկահողմեր ու հորդառատ անձրեւներ են տեղացել «կարմիր կղզու» հյուսիսարեւմտյան շրջաններում: Գետերում ջրի մակարդակը բարձրացել է 3,6 մետրով: Հաստատես տուժել են վանիլի մշակման կենտրոնի՝ Անթալա քաղաքի շրջանները:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

# Մշակույթ

# Արշի ծառայություն ճակատագրի ընդդիմին

## Ի՞նչ անի հերոսը՝ հանդիպելով բազմագլուխ վիշապին

Կրթության վերաբերյալ «Մոլորակում» ծավալված բանավեճը, որն, ինչպես հայտնում է օրաթերթի փետրվարի 12-ի համարը, «զուլալել է կուլիսային կրքերը, դարձելով այդ կրքերի անհամատեղելի բախման շարունակական անվերջությունը», նոր փուլ է մտել եւ կրթական հեղափոխության նվիրյալներից տարբեր կարծիք ունեցողների «դորտը տեղը դնելու» միտում է դրսեւորում: Թերթի նշված համարի մի ամբողջ էջ, հիշյալ հեղափոխությունը հերթական անգամ գովերգելուց, հեղափոխության առաջնորդին հեմիաթի հերոսի հետ նույնացնելուց եւ վերջինիս «հավերժության խնձորներ» խոսանալուց, Գխ (նախկին) դասգամավոր, մանկավարժական գիտությունների թեկնածու Ֆերդինանդ Ղազարյանին համենայնդեպս կրկին «ջարդելուց» զատ («Մոլորակը» մի անգամ արդեն հասցրել էր «ոչնչացնել» իր իսկ հեղինակին), նվիրված էր իմ համեստ անձին «մահացու հարված» հասցնելու հայրենանվեր գործին: Հոդվածը («Երբ գնում ես Հազարան Բլրույի ետեւից, ականջներդ փակում ես»), իմ տղավորությամբ, մոնտաժված է երկու տարբեր ոճով գրված մասերից, տեսական-խորասական (որ վայել է կրթական հեղափոխության ասպետի դաբեսիկ գրչին) եւ դրիմիտիվ-հայհոյական (որ, ըստ իս, այլմոլորակայինների եւ հեմիաթների թեմայով մտասեւեռման կնիքն է կրում):

Տեսական մասը հիմնականում կրկնում է որդես ախիոմ ներկայացվող այն «ճշմարտությունը», թե հին դպրոցի կողմնակիցներն անտեղյակներ են, խավարամիտներ, ըստ հոդվածագրի նաեւ հեռուստասերիալներով «զոմբիացած» ուսուցիչներ, հավերժաբար իրենց նմանակը կերտելու մարմաջով տառապող ծնողներ, բլեյանական հանճարին ոչ հասու «հայաբավորներ» եւ այլն, նոր դպրոցի կողմնակիցները «մշակույթի ներկայի եւ ապագայի, հայրենիքի գերխնդրով» տառապող մարդիկներ:

Մնացածը հագեցած է խորհուրդներով (օրինակ, «հայրենիքի մասին խոսելուց առաջ բացեք Հովհաննես Շիրազի «Իմ սուրբ հայրենիք» բանաստեղծությունը... եւ տեսեք, թե ինչպես է ձեզ դասում ոչ թե «հայաբավորի», այլ մոլորակի քաղաքացու հոյարտությունը՝ սա չէ՞ հայրենիքի գերխնդիրը), այլմոլորակայիններին եւ հեմիաթների վերաբերյալ հոդվածագրի բառապաշարն իր ողջ շքեղությամբ ցուցադրող քնարական գեղումներով («երեխաներն այդ հարցը (այլմոլորակայիններին-Լ. Պ.) տալիս են, երբ զգում են Արեգակի ջերմությունն ու երեկոյան տուն են վերադառնում Լուսնի շողի արահետով... նրանց համար երկինքը մարտադաշտ է, լուսինը՝ հրամանատարի 6-դ էջն ամբողջությամբ) համարձակվում եմ Գյոթեի անունը տալ, գիտե՞ք արդյոք, ով է նա, քանի՞ հայերեն եւ քանի՞ գերմաներեն աշխատություն եմ կարդացել նրա մասին... եւ եթե հանկարծ ձեր առջեւ ոչ թե այլմոլորակային, այլ գերմանացի ուսանող հայտնվի, մշակե՞լ եմ նրա առջեւ մեղանչելու կամ կոտրատվելու ձեւերը...»: Ուրեմն, սիրելի ընթերցող, այստեղ 7 անգամ չափիր, հետո կտրիր Գյոթեի կամ մեկ այլ հանճարի անունը տալուց առաջ: «Երբ հիշում եմ Սեւակի «Անդրեյի զանգակատունը», դարձյա՞լ գիտության տեսանկյունից եմ նայում խնդրին...»: Մոռեցումն, անշուշտ, արժանի է ամենայն ուշադրության, միայն թե ինչո՞ւ «դարձյալ», հասկանալի չէ: «Ականատեսները վկայում են, որ գոյություն ունի այլմոլորակայինների երկու տիպ՝ բարի եւ չար... Թե ինչու անդրադարձավ «Ազգ» օրաթերթի հոդվածին, միայն այն դասճառով, որ Ֆ. Ղազարյանը եւ նրանք, ովքեր սարսափում են այլմոլորակայիններից հետ հանդիպման մտքից, համոզվեն, որ «մոլորակայինները» կարող են նաեւ զույգի բռնվել «այլմոլորակայինների» հետ՝ ուղիղ նրանց աչքերին նայելով: անկախ նրանից, նրանք բարի են, թե՞ չար»: Այստեղ որոշակի շփոթ կա. «Ազգի» հոդվածը Ֆ. Ղազարյանի եւ այլմոլորակայինների հետ որեւէ առնչություն չունի: «Տիկին Պողոսյանը օգնության է կանչում տատիկներին ու պապիկներին: Հոդվածագիրը դարձյալ բերում է «տատիկները եւ պապիկները», ինչպես ասում են, այլ վաղուց երգված օրերից են: Շարունակե՞մ: Կարծում եմ, չարժե: Այսքանն էլ շատ է ի դասախոսական խառնածին «մեղադրականի», որին, թերթային փոխհրաձգությունների նկատմամբ ունեցած վերաբերմունքիս հակառակ, ստիպված եմ անդրադառնալ:

Ի հավելումն ասվածի եւ չասվածի, ուզում եմ հոդվածագրին հիշեցնել հեմիաթի հերոսի ճանապարհին հանդիպող քազմագլուխ հրեշի մասին, որի յուրաքանչյուր ընկած գլխի փոխարեն նորերն են աճում: Գուցե, այս կերպարը նո՞ւյնպես հարմարվում է հայ դպրության ապագան տնօրինել հավակնող «մեկ-նումեկին»:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

# Հռոմեական էլեգիաներ Երեւանի Կամերային երաժշտության տանը

Երբ Իոսիֆ Բրոդսկին հանճարեղ Վլադիմիր Վիսոցկուն նվիրեց բանաստեղծությունների իր գիրքը՝ «Պոեզիան՝ Պոեզիից» մակագրությամբ, հայրենիքում անկարգավիճակ «բարդի» համար դա մեծագույն պարգեւատրությունն էր, զի վերջապես գտնվեց մեկը՝ եւ ինչպիսի մեկը, ով հաջություն ունեցավ Վիսոցկու մեջ տեսնել Բանաստեղծի: Ինչո՞ւ հենց այս դրվագը... Բանն այն է, որ բեւեռապես տարբեր երկու անձ չափազանց հարազատ էին մեկ հարցում՝ դրսում գտնվելիս երբեք չմարկոծել հայրենիքը, չդառնալ բահագրգռվածների ձեռքում խոսափող եւ այլ էժանագին միջոց: Եվ երբ, արդեն տասը տարի շարունակ, որոշ «գրողներ» Բրոդսկուն շնորհված Նոբելյան մրցանակը կապում են խաղաքաղաքականության հետ (իբր թե Եվտուշենկոն էլ որ գնար, կստանար, եւ ընդհանրապես այն ժամանակ ով էլ գնար, կստանար), դա մեղմ ասած, անտակտ է հնչում իսկական ստեղծագործողի եւ իսկական ընթերցողի հանդեպ: Սա հենց այնպես...

Փետրվարի 12-ին Կամերային երաժշտության դահլիճում կազմակերպված էր Իոսիֆ Բրոդսկու հայերեն թարգմանությամբ առաջին գրքի շնորհանդեսը. «Հռոմեական էլեգիաներ», այսպես է վերնագրված «Զարկ բարեգործական միության» հովանավորությամբ տպագրված գրքույկը, որը հենց նախաբանում անվճար բաժանվեց բոլոր երաժիշտներին: Շանթ Մկրտչյանի թարգմանությամբ, տարբեր ուղղվածության եւ ծավալի տասնմեկ գործը հայ ընթերցողին հնարավորություն են տալիս մոտիկից ծանոթանալու Իոսիֆ Բրոդսկու պոեզիային, որի առաջին «հայկական» նմուշները հայտնի են դեռ 1980-ներից:

Ինչ վերաբերում է բուն շնորհանդեսին, որի կազմակերպիչը նույնինքը «Զարկ բարեգործական միությունն» էր, ապա այն անոթայման հիշարժան կլինի, հատկապես կոլորիտի առումով: Ցուրտ դահլիճում Սիբելիուս եւ Վիվալդի... Երեւանի խաղաքաղաքացիների Կամերային նվագախմբի կատարողական հայտնի շնորհը (դիրիժոր՝ Մերուժան Սիմոնյան) անմնացորդ ջերմացրեց ցուրտ սրահը, իսկ փայլուն Ֆուժերները կարեւոր անկաշկանդություն հաղորդեցին միջոցառմանը:

Ուրախալի է, որ այս ձմռանը, փաստորեն, ամենախստաշունչ երեկոներից մեկը անզոր գտնվեց ինչ-որ կերպ ազդելու շնորհանդեսի ընթացքի եւ ճաշակի վրա:

Ա. Պ.

ՀԱՄԱՌՈՏ

## Ժանսեմի ցուցահանդեսը Փարիզում

Փետրվարի 6-ին Փարիզի «Գալերի Մաշինիոնում» ներկայացվել են հայազգի ժանսեմի տարբեր ժամանակաշրջանների գեղանկարչական գործերը: Ժանսեմի (Հովհաննես Սեմերջյան) ընտանիքը 1915 թ. ցեղասպանությունից փախել է Հունաստան, այնուհետեւ՝ Ֆրանսիա: Ըստ արվեստագետի, այս ցուցահանդեսը միջանկյալ բնույթ է կրում, առաջիկա մայիսի 6-ին նախատեսված ցուցահանդեսում կներկայացվեն նկարչի վերջին շրջանի աշխատանքները: Նկարչի խոսքերով՝ «Այս աշխատանքները արդյունք են առաջընթացի, բայց ես միշտ էլ շատ թե քիչ ընթացել եմ նույն ուղղությամբ»:

«ԵՐԵՎԱՆ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## Կովկասի ուսանողները կհավաքվեն Հայաստանում

ԵՐԵՎԱՆ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ՓԱՍՏ: Փետրվարի 16-ից 21-ը Հայաստանում կանցկացվի Կովկասյան տարածաշրջանային ուսանողական կոնֆերանս «Կովկասի ներկան եւ հեռանկարային զարգացումը, կայունությանն ու փոխըմբռնմանը նպաստող գործոնները» խորագրով: Այս առիթով կոնֆերանսի կազմկոմիտեն փետրվարի 14-ին՝ ժամը 12-ին մամլո ասուլիս կանցկացնի ժուռնալիստի տանը՝ տեղեկացնելու կոնֆերանսի կազմակերպական աշխատանքների ընթացքը:

## Ձեր երեխան կնախընտրեր «100 էջ» ունենալ իր գրադարակում

«Մեր այրի համար նոր բան է ու հետաքրքիր», «Հայրուր էջ» գրական-գեղարվեստական հրատարակության՝ օրերս լույս տեսած համարը թերթելով ասաց խմբագրություն այցելողներից մեկը:

Որակյալ թուղթ, գունավոր տպագրություն, հայրուր էջի մեջ առանձին ամսագրեր՝ Գրական, Իմաստասիրություն, Մանկական, Աբսուրդ մեծ վերնագրերով, շարիկներին՝ 5-15 տարեկանների նկարազարդումներով:

Ո՞ւմ գրական հետքերը կգտնենք հայրուր էջում: Պարզ չէ՞, եթե գլխավոր խմբագիրը Մհեր Դավոյանն է, խմբագիրը՝ Սմբատ Բունիաթյանը: Ճիշտ կռահեցիք. Արմեն Դավթյան, Վարդան Ֆերեշեթյան, Վահագն Աբաբեկյան, Սմբատ Բունիաթյան, Գուրգեն Խանջյան, Հրայր Բեյլերյան, Խաչիկ Մանուկյան, իհարկե՝... Ռազմիկ Դավոյանն էլ կա, թեեւ «համեստաբար» միայն մեկ, բայց լավ բանաստեղծությամբ: «Լուսանցքից դուրս» Վահրամ Թաթիկյանին էլ կարելի է հանդիպել, լուսանցքից ներս՝ Սյորեն Կերկոգորին, Հեղինե Մորեանին, Կոստան Դարյանին, Վազգեն Շուշանյանին...

Իսկ հիմա միանգամայն լուրջ՝ առանց ծիծաղի՝ անուններն էլ հուշում են, որ ստեղծվածը բանկարժեք հրատարակություն է (ինքնարժեքը կարծեմ 7 դոլար է): Այն հովանավորելու համար Վանո Սիրադեղյան ոգիի լինել, որին խմբագրությունը, ի դեմ, բնորհակալություն է հայտնել ամսագրի վերջին էջին:

ԱՆ. Հ.

## «Հայաստանի ժողովրդական տնտեսություն» ամսագրի 40-ամյակը

Հայաստանի Ազգային գրադարանում կազմակերպված ցուցահանդեսում ներկայացված են սույն ամսագրի տարբեր տարիների համարներ, որոնցում տեղ գտած զանազան նյութերը ցույց են տալիս հանրապետության անցած տարիների տնտեսական կյանքի պատկերը:

Պարբերականն ունեցել է քաղաքական-տնտեսական, գիտատնտեսական եւ գործնական ուղղություններ: Այն իր էջերում հրապարակել է հոդվածներ, որոնք նվիրվել են ժողովրդական տնտեսության կառավարման, պլանավորման ու կազմակերպման, գիտատեխնիկական առաջընթացի հարցերին: Ամսագրում հրապարակվել են վիճակագրական ամփոփիչ տվյալներ, կոնսուլտացիաներ, ինքնադասական հոդվածներ եւ գրախոսականներ, մասնագիտական գրականության անոտացիաներ եւ հրատապ հարցերին վերաբերող այլ նյութեր:

Ամսագրի աշխատանքներին ակտիվորեն մասնակցել են տնտեսության ու գիտության աշխատողները, արտադրության կազմակերպիչներն ու ղեկավարները, դասախոսներն ու ասպիրանտները: Հրապարակված հոդվածներից են Ա. Դարյանի, Շ. Նազարյանի «Թեթեւ արդյունաբերության հետագա զարգացման կարեւորագույն խնդիրները», Հ. Ալոեսյանի «Լուրջ ուշադրություն մեքենաշինության զարգացմանը», է. Սարգսյանի «Ֆինանսական օրգանների տնտեսագիտական եւ վերահսկողական աշխատանքների բարելավման մասին», Ռ. Սարինյանի «Դարասկզբի հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուղիները»:

ՀՐԱՉՅԱ ՀՈՒԼՈՒՆՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

## Մայքլ Ջեքսոնը բանագո՞ղ

Տարօրինակություններով հանրահայտ երգիչ Մայքլ Ջեքսոնը շատ մեկնել է Հռոմ՝ դատապարտելու իր դեմ հարուցված բանագողության մեղադրանքներին: Իտալացի ճանաչված ու սիրված երգիչ Ալ Բանոն մեղադրանք է ներկայացրել Ջեքսոնին ասելով, որ վերջինիս 1991-ի «Վանգավոր» ալբոմում տեղ գտած «Դու այնտեղ կլինե՞ս» երգը բանագողություն է, որի հիմքում ընկած է իր 1987-ին գրած «Բալաֆայի կարապները» երգը: Նախաքննության ժամանակ Ջեքսոնը վկայել է, որ երբեք չի հանդիպել Ալ Բանոյին եւ այդ երգի մասին առաջին անգամ է լսում: Այս մասին հաղորդել է «Հերալդ տրիբյուն» թերթը փետրվարի 6-ի համարում:

## Տարեդարձն առողջությունից կարեւոր է

«Հերալդ տրիբյուն» թերթի տվյալներով, դերասանուհի Էլիզաբեթ Թեյլորը խնդրել է բժիշկներին հետաձգել իր ուղեղի բարդակ ուռուցքի վիրահատությունը, որը նախատեսված էր կատարել փետրվարի 17-ին: Պատճառն այն է, որ նախորդ օրը՝ փետրվարի 16-ին նրա 65-ամյակի տոնակատարությունն է, որի ընթացքում նա մտադիր էր հանգանակություն կատարել ԴԱՎ-ի (Սպիդ) դեմ պայքարելու համար: Նշենք, որ նրա տարեդարձը իրականում փետրվարի 27-ին է: Այդ օրը նախատեսվում է Սամբուրում անցկացնել խորհրդաժողով նվիրված ԴԱՎ-ի դեմ պայքարի հիմնահարցերին: Կկարողանա՞ Թեյլորը, ինչպես խոստացել էր, մասնակցել այդ ժողովին:

Հ. Ծ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

# Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

## Մալդինին նորամուտը նշում է հաղթանակով

### *Արգենտինացիները չկարողացան հաստատման հասնել ջախջախիչ պարտության դիմաց*

ՀՐԱՏՐ ԵԱՁԱՐՅԱՆ

Շմեռային արձակուրդներից հետո Եվրոպայում կրկին աշխուժացավ միջազգային ֆուտբոլային կյանքը: Կրկին չորեքշաբթի օրը. սովորական ժամկետներին հին աշխարհամասում անցկացվեցին 1998 թ. Ֆրանսիայում կայանալիք աշխարհի առաջնության ընտրական կայծ. առայժմ դայֆարի դորտն էին ընդգրկվել 6 երկրների ընտրանիներ: Արդեն հայտնել ենք Մոնտե Կարլոյում կայացած Էստոնիա-Շոտլանդիա (0-0) վերախաղարկված հանդիպման մասին: Այս թիմերն ընդգրկված էին եվրոպական 4-րդ ենթախմբում:

Իսպանիայի հավաքականը. որ 6-րդ խմբի առաջատարն է. սեփական խաղադաշտում մրցեց հետնապահի Մալթայի հավաքականի հետ: Դաշտի տերերը. «անտեսելով» հյուրընկալության բոլոր կանոնները. չորս անդամասխան գնդակ ուղարկեցին հյուրերի դարպասը:

Փոքր-ինչ անակնկալ ավարտվեց 2-րդ ենթախմբի առաջատարների՝ Անգլիայի եւ Իտալիայի հավաքականների լոնդոնյան մրցախաղը: Հատկանշական է. որ «Ուեմբլիում» Իտալիայի հավաքականին առաջին անգամ «մատի» օրհնեց թիմի նոր ավագ մարզիչ Չեզարե Մալդինին: Նա մեծ հույսեր էր կապում «մատախլադաս Ալբիոնի» ակումբներում հանդես եկող Դի Մատեոյի եւ Չոլայի հետ: Եվ սաները հուսախաբ չարեցին իրենց մարզչին: Իտալացիները հաղթեցին 1-0 հաշվով:

Հարավային Ամերիկայում եւս ընտրարշավ է ընթանում: Հիշեցնենք. որ այս աշխարհամասի 9 թիմերը մրցում են երջանաձեւ մրցակարգով: Չորս լավագույն թիմերը կընկերակցեն Բրազիլիայի հավաքականին. որը որպես աշխարհի չեմպիոն ազատված է ընտրական խաղերից: Մեծ հետաքրքրություն էր առաջացրել Կոլումբիա-Արգենտինա խաղը: Արգենտինացիները ջանում էին ռեւանշի հասնել երկու տարի առաջ սեփական խաղադաշտում կրած ջախջախիչ պարտության (0-5) դիմաց: Սակայն կոլումբիացիները. որոնք հանդես էին գալիս մարտական կազմով. մինչդեռ մրցակիցների ճամբարում բացակայում էին Բալբոն եւ Բաշիստուտան. այնուամենայնիվ չզիջեցին «նյարդերի պայքարում» եւ խաղալով 1-0 հաշվով. ամրագրեցին միանձնյա առաջատարի դիրքերը:

Որպես անակնկալ կարելի է ընդունել Էկվադորի հավաքականի հաղթանակը աշխարհի կրկնակի չեմպիոն Ուրուգվայի հավաքականի նկատմամբ: Օգտվելով բարձր լեռնային դիրքի առավելությունից. էկվադորցիները հաղթեցին 4-0 հաշվով: Պարագվայի հավաքականը հաղթելով Պերուի ֆուտբոլիստներին (2-1). կրկին երեք միավորով ետ մնաց առաջատարից: Մրցաշարի անհաջողակները Չիլիի եւ Բոլիվիայի հավաքականները խաղաղ ելքով (1-1) ավարտեցին առերես մրցամարտը:

**Մրցաշարային աղյուսակներ**

**Հարավային Ամերիկա**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Կոլումբիա | 8 | 6 | 2 | 0 | 15-5 | 20 |
| 2. Պարագվայ | 8 | 5 | 2 | 1 | 10-4 | 17 |
| 3. Էկվադոր | 8 | 4 | 0 | 4 | 12-9 | 12 |
| 4. Բոլիվիա | 8 | 2 | 4 | 2 | 12-8 | 10 |
| 5. Արգենտինա | 8 | 2 | 4 | 2 | 10-8 | 10 |
| 6. Ուրուգվայ | 8 | 3 | 1 | 4 | 6-10 | 10 |
| 7. Չիլի | 8 | 2 | 3 | 3 | 11-12 | 9 |
| 8. Պերու | 8 | 2 | 3 | 3 | 9-11 | 9 |
| 9. Վենեսուելա | 8 | 0 | 1 | 7 | 5-23 | 1 |

**Եվրոպա**

**2-րդ ենթախումբ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Անգլիա | 4 | 3 | 0 | 1 | 7-2 | 9 |
| 2. Իտալիա | 3 | 3 | 0 | 0 | 5-1 | 9 |
| 3. Լեհաստան | 2 | 1 | 0 | 1 | 3-3 | 3 |
| 4. Վրաստան | 2 | 0 | 0 | 2 | 0-3 | 0 |
| 5. Մոլդովա | 3 | 0 | 0 | 3 | 2-8 | 0 |

**6-րդ ենթախումբ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Իսպանիա | 6 | 5 | 1 | 0 | 19-3 | 16 |
| 2. Հարավսլավիա | 5 | 4 | 0 | 1 | 18-4 | 12 |
| 3. Սլովակիա | 4 | 3 | 0 | 1 | 12-5 | 9 |
| 4. Չեխիա | 3 | 1 | 1 | 1 | 6-1 | 4 |
| 5. Ֆարերներ | 5 | 0 | 0 | 5 | 5-22 | 0 |
| 6. Մալթա | 5 | 0 | 0 | 5 | 0-25 | 0 |

ՄՐՑԱՊԵՊ

## Ողջ Էկվադորը Բուկարամի եւ Մարադոնայի դեմ է

Էկվադորի նախագահ եւ տեղական «Բարսելոն» ակումբի նախագահի պաշտոնները համատեղող Աբդալա Բուկարամը սխալված էր խոստովանել. որ այս երկրի «Բարսելոն» ակումբում մեկ հանդիպում անցկացնելու համար արգենտինյան «աստղ» Դիեգո Մարադոնային խոստացած միլիոնանոց հոնորարը չի վճարվի:

Նրանից հետո. երբ տեղական մամուլը հայտնեց. որ խաղին մասնակցելու դեպքում Մարադոնան 1 մլն դոլար կստանա. ծանր տնտեսական ճգնաժամ ապրող Էկվադորում բոլորի ալիք բարձրացավ ընդդեմ պետական միջոցների «ֆամուն տալուն»: Այդ ժամանակ «կրկնակի նախագահը» հայտարարեց. «Մարադոնան աղբանոց է. որը վաճառվում է»: «Եթե գործը հաջող ընթանա. Մարադոնան կստանա հոնորար. հակառակ դեպքում վնասներ կկրի». որոշել է յուրօրինակ վարքով աչքի ընկնող նախագահը:

Առայժմ հայտնի չէ. թե նման հայտարարությանը ինչպես են արձագանքել Մարադոնան եւ նրա գործընկերները. սակայն Էկվադորի բազմամիլիոն բնակիչները արդարացիորեն ընդունում են. որ երկրի նախագահը պետք է զբաղվի պետական գործերով եւ մտահոգվի. հայտնի է նրանով. որ ֆուտբոլ է խաղում. թռչում է պարաշյուտով. կատարում է լատինաամերիկյան հրաշալի հրգեր. բայց ըստ երեւույթին. պետական գործերով զբաղվում է վերջին հերթին: Հենց այդ հանգամանքն էլ երկրում պետական հեղաշրջման եւ զանգվածային հուզումների եւ նրա պաշտոնանկության պատճառ դարձավ:

այլ ոչ թե ավելորդ խնդիրներ ստեղծի իրեն. պետությանը եւ զանձարանին: Մարադոնայի հետ պայմանագիրը. որը դարձավ աղմկոտ դեպքերի պատճառ. յուղ լցրեց նախագահ Բուկարամայի հասցեին ուղղված կրակին: Էկվադորի նախագահը

ՇԱԽՄԱՏ

## Ուբեդայում առջեւում Լոթյեն է

Իսպանիայի Ուբեդո քաղաքում անցկացվող խոշոր գրոսմայստերական մրցաշարի մասնակիցները հանգստյան օրվանից հետո անցկացրին չորրորդ տուրի հանդիպումները:

Հայաստանի չեմպիոն Վլադիմիր Հակոբյանը սեւերով ոչ-ոքի խաղաց Գերմանիայի ներկայացուցիչ Արթուր Յուսուպովի հետ:

Խաղաղ արդյունքով ավարտվեցին նաեւ Բարեւ-Լոթյե. Կորչնոյ-Ալմաշի հանդիպումները: Առաջատարներից մեկը՝ Խալիֆմանը. պարտություն կրեց Բելյավսկուց: Առաջին անգամ անհաջողության մատնվեցին նաեւ Թիմանը եւ Իլյեսկասը. որոնք խաղում էին համապատասխանաբար Լեկոյի եւ Անդերսոնի հետ:

Չորս տուրից հետո աղյուսակը 3 միավորով գլխավորում է ֆրանսիացի ժոել Լոթյեն: 2,5-ական միավոր ունեն Անդերսոնը. Բելյավսկին. Խալիֆմանը. Լեկոն: Հակոբյանը 2 միավորով 6-7-րդ տեղերն է բաժանում Բարեւի հետ:

Հինգերորդ տուրում երեւանցի գրոսմայստերը սպիտակներով հանդիպում է Իլյեսկասի հետ:

Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## Մարոկկացի մարզիկի նոր նվաճումը

Մարոկկացի մարզիկ Իսամ էլ Ռեհրոյը համաշխարհային նոր ռեկորդ սահմանեց Բելգիայի Ժենն քաղաքում կայացած թեթեւ ատլետիկայի մրցումներում: Նա 1500 մ մրցաշրջանը անցավ 3 ր.ոպե 48.45 վայրկյանում բարձրացնելով ռուանդացի թեթեւատլետ Իոն Կոգլինի ցուցանիշը. որը սահմանվել էր 1983 թ. փետրվարի 27-ին. այսինքն մոտ 14 տարի առաջ:

## Դե Բիլդեն փոխում է գրանցումը

Բելգիայի ֆուտբոլի միության մարզական կոմիտեն որոշել է որակազրկել «Անդերլեխտի» եւ ազգային հավաքականի հարձակվող Ժիլ դե Բիլդեին մինչեւ մարտի 31-ը: Նման պատիժը այս երկրում գնահատում. են որպես շաբաթվա. հաշվի առնելով ռմբարկուի արարքը: Հիշեցնենք. որ դեկտեմբերի 21-ին դե Բիլդեն հենց խաղադաշտում ծեծել էր «Ալոստ» ակումբի ֆուտբոլիստ Քրիսթ Պորտեյին: Տուժածին պատռված դեմքով. քթի կոտրվածքով եւ վնասված աչքով տեղափոխել էին հիվանդանոց: Հետաքրքիր է. որ մրցավարները այն ժամանակ նույնիսկ «չնկատեցին» խախտումը. իսկ տեսանյութը «նկատել» էր միայն հեռուստադիտողը:

Հնավանաբար. մարզական կոմիտեի անդամները դեկավարվել են այն հանգամանքով. որ դե Բիլդեն հասարակ «մահկանացու» չէ. այլ Բելգիայի 1996 թ. «Ոսկե խաղակոշիկի» դափնեկիրը եւ... «ամենակոռեկտ խաղացողներից մեկը»: Բացի այդ. դե Բելդեի փաստաբանները ապացուցել են. որ Պորտեն է դրդել իրենց պաշտպանյալին՝ լուսանկար կա. որում պարզ երեւում է. որ «Ալոստի» ֆուտբոլիստը դիմել է հանրահայտ ռմբարկուի մարգագետին: Այս միջադեպի կապակցությամբ գործը քրեական դատարանին չի հասնի. քանի որ տեսագրությունը բավարար նյութ չի համարվում բոլոր հանգամանքները պարզելու համար:

Վերջին պահին անակնկալ նորություն ստացվեց՝ ժիլ դե Բիլդը չորս եւ կես տարվա պայմանագիր է կնքել հոլանդական «Էյնդհովեն» ակումբի հետ. որի գույները կպաշտպանի որակազրկման ժամկետը լրանալուց հետո:

ՀԱՄԱՌՈՏ

## Դեղին գնդակը սավառնում է մարզահրապարակների վրա

Գերմանացի թենիսիստ Բորիս Բեքերը դուրս եկավ Դուբայի բաց առաջնության երկրորդ փուլ՝ երկու մրցափուլերում հաղթելով Ուգոլներին: Այսպիսով. Գերմանիայի թիվ 1 ռակետն արդարացրեց իրեն. Ավստրալիայի կորտերում անհաջող ելույթներից հետո: Իսկ Կալիֆորնիայում (ԱՄՆ) անցկացվող «Սան-Ժոզե օուփընն» մրցաշարում առաջին արգելքը հաջող հաղթահարեց Փիթ Սամփրասը: Ամերիկացին առավելության հասավ իր հայրենակից Ալեխս Ռոդուլեսկուի նկատմամբ՝ 7-6, 6-3:

## Կրաբբեն պնդում է իր անմեղությունը

Եթե դատական իշխանությունները պաշտպանեն գերմանացի թեթեւատլետուհի Կատրին Կրաբբեին. որն ինչպես հայտնի է. տուժել է խթանիչներ օգտագործելում կասկածանքի պատճառով. ապա նա որպես փոխհատուցում կարող է 625 հազար դոլար ստանալ ՀԱԱԴ-ից (թեթեւ ատլետիկայի միջազգային ֆեդերացիայից): Սակայն արագավազքում աշխարհի նախկին չեմպիոնուհու փաստաբանները գտնում են. որ այդ գումարը Կրաբբեն. այնուամենայնիվ. չի ստանա. իսկ բողոքարկումը կմերժվի: Մարզուհին առաջվա պես իրեն անմեղ է համարում:

## Արաբները խզեցին պայմանագիրը Իվիչի հետ

Արաբական Միացյալ Էմիրությունների հավաքականի գլխավոր մարզիչ. հորվաթ Տոմիսլավ Իվիչը տեղափոխվել է զբաղեցրած պաշտոնից: Ինչպես նշում է տեղական մամուլը. այդ մասին որոշումը ընդունել է ԱՄԷ ֆուտբոլի ֆեդերացիան: Իվիչի հետ պայմանագրի խզման պատճառները չեն բացատրվում. սակայն. ըստ Աբու-Դաբիում շրջող լուրերի. ԱՄԷ-ում դժգոհ են խաղային մարտավարությունից. որը մարզիչը պարտադրել է հավաքականի խաղացողներին Ասիայի գավաթի խաղարկության եզրափակիչ հանդիպումներում. եւ արդյունքում թիմը գրավել է երկրորդ տեղը: Իվիչի հետ պայմանագիրը խզվել է ժամկետի լրանալուց հինգ ամիս առաջ: Ժամանակին «Այաքսը». «Անդերլեխտը». Մադրիդի «Ատլետիկոն». «Մարսելը» եւ «Պարի Սեն Ժերմենը» գլխավորած՝ հայտնի մարզիչին երախտագիտություն հայտնեցին կատարած աշխատանքի եւ իր պատմության մեջ առաջին անգամ ԱՄԷ հավաքականը Ասիայի գավաթի խաղարկության եզրափակիչ հասցնելու համար: Աշխարհի առաջնության ընտրական մրցաշարին ԱՄԷ հավաքականի ֆուտբոլիստները կնախապատրաստվեն նոր ավագ մարզիչի. բրազիլացի Լորի Սանդրիի ղեկավարությամբ. որը մարզում է տեղական «Ալ Այն» թիմը:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

# Օրվա հեռագիրը

ԵՐԵՎԱՆ

## ԱԺՄ գրասենյակի 50 քմ-ի համար պարտադրվում է երկրորդ վարձակալ

ԱԺՄ գրասենյակի 1-ին հարկը, որ ներկայումս ժամանակավորապես «տեղակայվել է» Իրավաբաշխության ներքո, փետրվարի 13-ին դարձյալ հայտնվեց ներքաղաքական (եւ ոչ միայն) թիրախում: Երեկ, ժամը 13:30-ի սահմաններում, իրավապահ մարմինների ուղեկցությամբ գրասենյակ են մտնում «նոր վարձակալները»՝ «Սաբլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները՝ վարձակալությանը տեր կանգնելու պահանջով: Իր հերթին մյուս կողմը՝ ԱԺՄ-ն, իրավապահ մարմիններին ներկայացնում է կառավարության թիվ 425 որոշումը «որոշ քաղաքական կուսակցությունների եւ հասարակական կազմակերպությունների տարածքով առյահովելու մասին» (թվագրված 1992 թ. հուլիսի 30-ին): Որոշման ԱԺՄ-ին վերաբերող հոդվածում մասնավորապես նշված է՝ «Երեւան քաղաքի պատգամավորների Սոլանդարյանի շրջխորհրդի գործկոմին Աբովյան փողոցի թիվ 12 շենքը սահմանված կարգով վարձակալական հիմունքներով հատկացնել ԱԺՄ-ին»: Կառավարության հիշյալ որոշման հիման վրա ԱԺՄ-ն եւ Սոլանդարյանի շրջխորհուրդը կնքել են վարձակալական պայմանագիր, ըստ որի վարձակալության ժամկետը լրանում է 1997 թ. օգոստոս ամսին: Պայմանագրում ԱԺՄ գրասենյակի 2 հարկերը հիշատակվում են առանձին-առանձին, եւ պարզվում է, որ վիճահարույց հատվածը 50 քմ է: ԱԺՄ-ն վարձակալման համար ժամանակին վճարել է 13,680 ռուբլի:

Իրենց հերթին, «Սաբլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները ցույց տվեցին քաղաքապետ Վ. Սիրադեղյանի թիվ 1015 որոշումը (թվագրված 1996 թ. դեկտեմբերի 23-ին):

Որոշման համաձայն՝ քաղաքապետը հանձնարարում է շենքերի եւ շինությունների շահագործման ձեռնարկության տնօրեն Մխիթարյանին հունվարի 1-ից սահմանված կարգով, 5 տարի ժամկետով 50 քմ տարածք վարձակալական հիմունքներով հանձնել «Սաբլ» ՍՊԸ-ին:

Սա վիճահարույց տարածքի փաստաթղթային պատմությունն է: Իսկ այդ փաստաթղթերը վկայում են հիշյալ տարածքի վրա ԱԺՄ-ի իրավունքների մասին, ինչը պետք է պահպանել մինչեւ ս. թ. օգոստոս ամիսը: Փաստորեն, խախտվում է նաեւ խնդրի իրավական մյուս կողմը. քաղաքապետը իր որոշմամբ բեկանում է կառավարության որոշումը:

Խնդիրը, սակայն ակնհայտորեն ունի նաեւ քաղաքական կտրվածք, որը հանգում է ներհասարակական, ներքաղաքական զտյանակը էլ ավելի ձգելուն կտրելու հեռանկարով:

Փետրվարի 13-ի ժամը 16:00-ի դրությամբ «դեռքի վայր է» ժամանել ՀՀ ՆԳ եւ ԱԱ փոխնախարար գնդապետ Վարյանը եւ ԱԺՄ-ից պահանջել ազատելու վիճահարույց տարածքը, իսկ «Սաբլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներին ասել, որ նրանք կարող են սկսել իրենց գործունեությունն այդ տարածքում:

Արդյո՞ք այդ 50 քմ տարածքով է անցնում Հայաստանում ժողովրդավարության վքարված գնացքը:

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ





### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երեւան քաղաքի հանրակրթական եւ գիշերօթիկ դպրոցների կոլեկտիվների անդամներին տրամադրված վիճակախաղի տոմսերի խաղարկության արդյունքում շահած ուսուցիչներին «Դիլիջան» առողջարանի ուղեգիր ստանալու համար խնդրվում է զանգահարել հետեւյալ հեռախոսահամարներով.

58-96-23, 56-11-87, 52-14-21:

«Խաչմերուկ» թերթի վիճակախաղի Ա կտրոնով «Դիլիջան» առողջարանի ուղեգիր շահած քաղաքացիները ուղեգիրը կարող են ստանալ թերթի խմբագրությունից (Հանրապետության փող., 37)

հեռ. 52-56-85, 56-23-51:


ՌՈՒՍԱՍՏԱՆ

## Ելցինը գործելու ազատություն է տալիս Կուլիկովին

13 ՓԵՏՐՎԱՐ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Ռուսաստանի ներքին գործերի նախարար Անատոլի Կուլիկովը հայտարարեց, թե նախագահ Ելցինն իրեն տվեց «քարե բլանշ», այսինքն գործողության ազատություն՝ տնտեսական հանցագործությունների դեմ պայքար մղելու համար: Ինտերֆաքս լրատվական գործակալության հաղորդագրության համաձայն, Կուլիկովը Ելցինին հանդիպեց այսօր առավոտյան, Կրեմլում: Հանդիպումը տեւեց շուրջ 40 րոպե: Կուլիկովի խոսքերով, Ելցինն իրեն կարգադրեց ամենախիստ միջոցներով պայքար մղել տնտեսական հանցագործությունների դեմ: Կուլիկովը նշեց, որ այդ պայքարը, բնականաբար, կմղվի օրենքի սահմաններում: Անցյալ շաբաթվա ընթացքում Կուլիկովը նշանակվեց փոխվարչապետ տնտեսական անվտանգության, հարկային ոստիկանության եւ մաքսային ծառայությունների հարցերով: Միաժամանակ նա պահպանում է ներքին գործերի նախարարի պաշտոնը:

ԱՇԽԱՐՀ

## Ռուսաստանը Իրանին հրթիռային տեխնոլոգիաներ չի վաճառել

ՄՈՍԿՎԱ, 15 ՓԵՏՐՎԱՐ, ՆՏ: «Ռոսվոորուժենիե» պետական ընկերությունը իր տրամադրության տակ տեղեկություններ չունի Ռուսաստանի կողմից Իրանին SS-4 տիպի միջին հեռահարության հրթիռների պատրաստման տեխնոլոգիաների կամ դրա մասին: Այդ մասին «Ինտերֆաքսին» տված հարցազրույցի ժամանակ հայտարարել է ընկերության ներկայացուցիչը: Ինչպես հաղորդել է «Լոս Անջելեզ թայմզ» թերթը, իսրայելյան եւ ամերիկյան հետախուզությունների կողմից բացահայտված գործարքի կապակցությամբ», ԱՄՆ-ը դիվանագիտական խողովակներով նախազգուշացում է ներկայացրել Ռուսաստանին: Իր հերթին, Ռուսաստանի Արտաքին հետախուզության ծառայության տնօրենի մամլո խոսնակ Տատյանա Սամոյլիսը հայտարարել է, թե ծառայության տվյալներով, Իրանի հետ հրթիռային նման տեխնոլոգիաների վաճառքի վերաբերյալ պետական մակարդակի գործարքներ չեն կայացվել:

## Փուչուների աղտոտամբություն թալիբների դեմ

ԻՍԼԱՄԱԲԱԴ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ՆՏ: Փետրվարի 13-ին Աֆղանստանի արեւելքում, Պակիստանի հետ սահմանակից Կունար գավառում, որ բնակվում է փուշտու ցեղը, աղտոտամբություն է սկսվել թալիբների դեմ, որոնք ցանկացել են գինաթափել տեղի փուշտուներին (մինչեւ այժմ նման քայլի չի դիմել Աֆղանստանի ոչ մի կառավարություն): Թալիբները հերքում են աղտոտամբության մասին հաղորդագրությունները: Անկախ աղբյուրներից հաստատում դեռեւս չի ստացվել: Օտարերկրյա լրագրողների մուտքը շրջան, գործնականորեն, արգելված է:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՐԵԱ

## Սովից նույնիսկ գլխավոր գաղափարախոսներն են սկսել `փախչել

13 ՓԵՏՐՎԱՐ, «Ազատություն», DW, BBC: Հյուսիսային Կորեայի աշխատավորական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, Հյուսիսային Կորեայի խորհրդարանի արտաքին քաղաքականության հանձնաժողովի նախագահ, 72-ամյա Խվան Յանգ Յոփը, որը համարվում էր Հյուսիսային Կորեայի գլխավոր գաղափարախոսներից մեկը, քաղաքական ապաստան ստանալու նպատակով դիմել է Չինաստանում Հարավային Կորեայի դեսպանատուն: Հաղորդվում է, որ Յանգ Յոփը Հյուսիսային Կորեայի ամենաբարձրաստիճան պաշտոնյան է, որը երբեւէ քաղաքական ապաստան ստանալու խնդրանքով է ներկայացել: Նա հայտարարեց, թե իր փախուստը դիտարկում է որպես հաշտեցման ազդանշան՝ Հյուսիսային եւ Հարավային Կորեաների միջեւ: Հյուսիսային Կորեան պնդում է սակայն, թե Հարավային Կորեան պարզապես առեւանգել է իշխող կուսակցության կենտրոնական կոմիտեի բարձրաստիճան պաշտոնյային: Պեկինում Հարավային Կորեայի դեսպանատան խնդրանքով, չինացի տասնյակ միլիցիոներներ սկսել են պաշտպանել դեսպանատան շենքը: Հարավկորեացիները կասկածում են, թե հյուսիսկորեացիները կարող են Յանգ Յոփին դեսպանատնից առեւանգելու փորձ կազմակերպել: Հարավկորեացիները դիմել են Չինաստանի իշխանություններին՝ աջակցել Յանգ Յոփին՝ ապահով Հարավային Կորեա հասցնելու խնդրանքով: Պեկինը, որը ավանդաբար լավ հարաբերություններ է պահպանում Հյուսիսային Կորեայի հետ, իսկ Հարավայինի հետ վերջերս առեւտրական խոշոր կապեր է հաստատել, դժվար կացությունում է հայտնվել:

## Հնագույն քրիստոնյաները՝ իսլամիստների թիրախ

13 ՓԵՏՐՎԱՐ, RFI, VOA: 9 եգիպտացի դպրոցական աղջիկներ չորեքշաբթի երեկոյան սպանվեցին, երբ մահմեդական ծայրահեղականները ներխուժեցին եկեղեցի եւ կրակ բացեցին աղոթողների վրա: Առնվազն 5 մարդ էլ վիրավորվեցին: Հարձակումը կատարվեց Կահիրեից մոտավորապես 200 կմ դեպի հարավ գտնվող Մինյա գավառում: Վերջին 5 տարիների ընթացքում սա այս տարածաշրջանի ամենաարյունալի հարձակումն էր քրիստոնյաների վրա: Հնագույն քրիստոնյաներ համարվող դպրոցականներին իսլամիստները հերետիկոսներ են համարում: Իսլամիստների Կահիրեի վարչակազմի դեմ սանձազերծած արշավի ընթացքում ավելի քան հազար մարդ է սպանվել:

### «ԲՐԱԲԻՈՆ ՖԼՈՐԱ ՍԵՐՎԻՍ»

**ֆիրման հրավիրում է աշխատանքի.**

- տարիքի աշխատողների՝ բարեսեր, 20-30 տարեկան, բարձրագույն կրթությամբ, օտար լեզուների իմացությամբ,
- ադմինիստրատիվ աշխատողների՝ 25-35 տարեկան, բարձրագույն կրթությամբ, համակարգչային գիտելիքների եւ օտար լեզուների իմացությամբ:

*Դիմել՝ Աբովյան-11*

### ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

3 սենյականոց բնակարան, ավտոնկով. Վրացական փողոցում:

ՀԵՌ՝ 25-11-87, 58-18-41

### ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

*2 սենյականոց բնակարան 5 հարկանի քարե շենքի 1-ին հարկում, Դեմիրճյան 17 շենք:*

*Հեռախոսներ՝*

*58-18-41, 52-30-56*

### ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոնկով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:

Զանգահարել՝ 27 22 57 ժամը 10-16, 58 33 26 ժամը 18-23


«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ – ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՆՉԱՐԿԻ ԵՎ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ ՀԵՌԱԽՈՍՈՎ: 589167, 581351

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 60149. Պատուեր 516. Տիրաժը՝ 3000. Ստորագրված է տպագրության՝ 13.02.1997. Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@